

ԱՐՑԱՆ

ԲԱԿՕ ՍԱՀԱԿԵԱՆ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՄԷՋ ՄԱՍՆԱԿՑԱԾ Է ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 7-ԲԳ ԽԱՂԵՐՈՒ ՋԱՀՐ ՎԱՌԵԼՈՒ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ

Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակեանը 22 յունիսին Տիգրանակերտի մէջ մասնակցած է Համահայկական 7-րդ խաղերու ջախի վառման հանդիսաւոր արարողութեան: Այս մասին կը յայտնեն Արցախի Հանրապետութեան Նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան ընդհանուր վարչութեան: Համահայկական 7-րդ ամառնային խաղերու բացման արարողութիւնը տեղի պիտի ունենայ 6 օգոստոսին՝ Ստեփանակերտի մէջ:

ԱՎԱՐԿ

ՆԱԽԱՐԱՐԸ, ԽՈՐՀՐԳԱԿԱՆԸ, ՏՆՕՐԷՆԸ, ՀԱՂՈՐԴԱՎԱՐԸ ՈՒ ԹՐԱՄՓԻ ՈՐՈՇՈՒՄԸ

(ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊԱՏՈՒՄ ՈՒ ԶԱՐԱԶԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ)

Միացեալ Նահանգներ - Իրան պատերազմի բռնկման խախտման իրավիճակը շրջելու որոշումը, ամերիկեան եւ ընդհանրապէս համաշխարհային մամուլին հաղորդած լրատուութիւններով բացառապէս կը վերագրուի Նախագահ Թրամփի անձնական որոշումին:

Իրանեան հակաօդային ուժերու կողմէ ամերիկեան անօդաչու սարքին չեզոքացումը հակահարուածի ենթահողի պատրաստութեան առիթ տուած էր: Անելին. հաղորդուած էր հետազային, թէ ռմբածիգները բարձրացած էին արդէն հարուածելու իրանեան յենակետեր, սակայն մետասաներորդ պահուն Միացեալ Նահանգներու Նախագահը վիճեցուցած էր գործողութիւնը:

Այս բոլորը աւելի պատումնային բնոյթի եղելութիւններու տպաւորութիւն կը ձգեն եւ ոչ թէ կը փոխանցեն ռազմաքաղաքական որոշումներով իրականացուող դիպլոմաի համոզումը:

Դժուար ընկալելի պիտի ըլլար այն, որ Միացեալ Նահանգներու թէ՛ պաշտպանութեան Նախարարը, թէ՛ Նախագահի անվտանգութեան հարցերու գլխաւոր խորհրդականը եւ թէ՛ արտաքին հետախուզութեան տնօրէնութիւնը միանշանակ համաձայն ըլլալին համարժեք հակահարուած տալու, ռմբածիգները ճամբայ պիտի ելլէին եւ մետասաներորդ պահուն Նախագահը կասեցնէր գործողութիւնը:

Որքան ալ սահմանադրական իրաւասութիւն ունենայ երկրի Նախագահը պատերազմական գործողութեան դիմելու կամ որոշում բեկանելու, այնուամենայնիւ կ'ենթադրուի, որ զուտ անձնական հիմունքով չեն ընթանար նման որոշումներու կայացումն ու իրականացումը:

Պատումնային արարները կը շարունակուին: Նախագահ Թրամփի ՝ «Փոքս Նիուզ» պատկերասփիւռի կայանի գործողութիւնը կասեցնելու որոշումին վրայ ազդած է հաղորդավար Թաքեր Քարլսընի որոշումը: Հետեւեալն է բեմագրութիւնը: Պաշտօնական Ուաշինկթընի համապատասխան բաժանմունքներու ղեկավարները՝ պաշտպանութեան Նախարար, անվտանգութեան գլխաւոր խորհրդական եւ արտաքին հետախուզութեան տնօրէն՝ ընդդէմ «Փոքս Նիուզ»-ի հաղորդավարին: Վերջինիս տեսակետը աւելի ծանր կշռած է, քան ոլորտի մասնագետ պատասխանատուներուն կարծիքը:

Տարբեր հանգամանքներ կրնան բացատրել մետասաներորդ պահու Թրամփի որոշումը, բայց ոչ հաղորդավարի կարծիքը: Անելի ճիշդը անհրաժեշտ է քաղաքական տրամաբանութեամբ ընկալել հրամցուած բեմագրութիւնը: Ի սկզբանէ իրանեան յենակետեր ռմբակոծելու որոշում գոյութիւն չունէր. Անհրաժեշտ էր սակայն յայտարարել, որ Նախապատրաստութիւն կայ այդ ուղղութեամբ, թէ վարչակարգի ուժային բաժանմունքները տարակարծիք չեն գործողութեան դիմելու, եւ տնտեսական պատժամիջոցներու ենթարկուած Իրանը այս ձեւով կ'ենթարկուի նաեւ ռազմական պատժամիջոցի: Նախագահ Թրամփի բարեխոյնութիւնն է, որ կը կասեցնէ զինուորական գործողութիւնը՝ ոչ համարժեք զոհեր խլելու հաւանականութենէն խուսափելու համար:

Ահա Նախագահ Թրամփի մարդկային երեսը, որ հեռատեսիլի հաղորդավարին կողմէ կը բացատրուի յառաջիկայ ընտրութիւններուն վարկանիշի ապահովման հօգի գործնով: Այլապէս Թրամփի կողմէ հակահարուածի իրականացումը, ըստ հաղորդավարին կը նկատուի խեղացնողութիւն:

Ամերիկեան այս պատումը ներքին սպառման համար կրնայ լաւ շուկայ նուաճել եւ գուցէ նաեւ իսկապէս ազդել ընտրական վարկանիշին վրայ: Թեւ Թրամփի ծայրայեղութիւնը Նախընտրողները կրնան դրական նկատել Իրանի դէմ ուղղուած ռազմական քայլ մը:

Արտաքին քաղաքականութեան մակարդակին վրայ Նախագահ Թրամփի յայտարարութիւններն ու առած քայլերը համահնչեղութեամբ չեն յատկանշուիր: Հիւսիսային Զորեայի Նախագահին ուղղուած սպառնալիքներուն յաջորդած ոչ թէ հիւլեական պատերազմի առաջնորդող քայլերը, այլ քաղաքական մեղրամիս ուրուագծող հանդիպումները վարքագիծի կտրուկ շեղումներ էին, տրամագծօրէն հակառակ ուղղութեամբ:

Չէ բացառուած, այս բոլորով հանդերձ, որ մետասաներորդ պահուն սահմանափակ ռազմական գործողութիւն իրականացուի: Յանկարծակի, ինչպէս կասեցումը՝ յայտարարուած, ցուցադրուած Նախապատրաստուած գործողութեան: Նախընթաց օրինակները նկատի ունենալով սակայն, չէ բացառուած նաեւ, որ քաղաքական մեծ առեւտրային գործարքի հետեւանքով կտրուկ փոփոխութեան ենթարկուին Ուաշինկթըն-Թեհրան յարաբերութիւնները: Հիսպսային Զորեայի Նախադէպը այդ կը յուշէ:

«Ա.»

ՊՈԼՍՈՅ ԶԱՐԱԶԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐԲԵՌՈՅ ԻՇԽՈՂ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆ ԴԱՐՁԵԱԼ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆՈՒԵՑԱԼ

Երէկ Պոլսոյ մէջ տեղի ունեցաւ Նոր քաղաքապետի ընտրութեան կրկնութիւնը: 31 մարտին տեղի ունեցած Նախկին քուէարկութիւնը անցեալ ամիս չեղեալ նկատուեցաւ Ընտրական կեդրոնական յանձնախումբին կողմէ:

Քուէարկութիւնը ընթացք առաւ առաւօտեան ժամը 8:00-ին եւ ւաւարտեցաւ կէսօրէ ետք ժամը 5:00-ին: Քաղաքի 39 շրջաններուն մէջ տեղադրուած էին 31,342 քուէատուփեր:

Թուրքիոյ Նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան Պոլսոյ Սկիւտար շրջանին մէջ քուէարկելէ ետք լրագրողներուն ըսաւ. «Պոլսոյ քուէարկողները քաղաքին համար ամենէն ճշգրիտ որոշումը պիտի տան»:



Իշխող Արդարութիւն եւ բարգաւաճում կուսակցութեան թեկնածու, Նախկին վարչապետ եւ խորհրդարանի Նախագահ Պինարի Եըլտըրըմ Պոլսոյ Թուզլա շրջանին մէջ քուէարկելէ ետք յայտնեց, որ՝ «ամբողջ

Շաբ.ը՝ էջ 9

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԱՅՍՕՐ ՅԱԵԼԵԱԼ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ ՊԻՏԻ ՀԱՍՏԱՏԷ ԻՐԱՆԻ ԴԷՄ

Միացեալ Նահանգներու Նախագահ Տանըլտ Թրամփ շաբաթ օր Զամփ Տեյվիտ մեկնելէ առաջ լրագրողներուն յայտնեց. «Պիտի մեկնիմ Զամփ Տեյվիտ» Իրանի շուրջ խորհրդակցելու համար»: Ան աւելցուց, որ զինուորական քայլը տակաւին սեղանի վրայ է:

Ան ըսաւ, թէ կ'ուզէ «հակառակորդին հոյակապ բաներ կատարել» Երկար ժամանակէ ի վեր»:

«Իրան կ'ուզէ անգամ մը եւս հարուտ երկրի մը ըլլալ: Իրանը անգամ մը եւս մեծ դարձնենք»:



«Կ'ուղղուիք դէպի Իրանի դէմ յաւելեալ պատժամիջոցներու հաստատում» արգելք հանդիսանալու համար, որ հիւլեական գէնք ձեռք ձգէ», ըսաւ ան:

Թրամփ շաբաթ օր «Թուիթթըր»-ի վրայ գրառում կատարելով յայտարարեց, թէ այսօր Իրանի դէմ Նոր պատժամիջոցներ պիտի հաստատուէ՝ նշելով, որ պատժամիջոցներուն քաղաքականութիւնը իր արդիւնքով կու տայ:

Լաւատեղեակ անձեր «Ուաշինկթըն Փոսթ» օրաթերթին յայտնեցին, որ Թրամփ հրաման տուած է Իրանի դէմ ելեկտրոնային յարձակումի մը, որ խափա-

նած է հրթիռներու արձակման եւ թիրախահար հրթիռներու կառավարման համար օգտագործուող իրանեան համակարգիչները:

Նշենք, որ հիւսգաբթի օր ամերիկեան անօդաչու թռչող սարքի Իրանի կողմէ վար առնուելէ ետք ամերիկացի բարձրաստիճան պաշտօնատարներ ուղղւած են Միջին Արեւելք:

Միացեալ Նահանգներու Նախագահի ազգային ապահովութեան խորհրդատու Ճոն Պոլթը շաբաթ օր ուղղուած է Իսրայել, իսկ Իրանի հարցով ամերիկացի յատուկ պատուիրակ Պրայըն Քուք ուրբաթ օր մեկնած է Սեւուական Արաբիա, ուրկէ Իսրայելի եւ Սեւուական Արաբիոյ կոչ ուղղեց միանալու Իրանի դէմ Ուաշինկթընի «ամենէն ծայրայեղ ճնշումի» արշաւին:

Շաբ.ը՝ էջ 3

ԵԹՈՎՊԻՈՅ ՄԷՋ ՅԵՂԱՇՐՋՈՒՄԻ ՓՈՐՁ

Եթովպիական պաշտօնական լրատուամիջոցներէ կ'հաղորդեցին, որ Եթովպիոյ Ամհարա Նահանգի վարչապետը եւ այլ պաշտօնատար մը սպաննուած են յեղաշրջումի փորձի մը ընթացքին:

Եթովպիոյ վարչապետ Ապէի Ամետ յայտարարեց, թէ Եթովպիական բանակի սպայակոյտի պետ գործարքի Միջոցին հրացանաձգութեան ենթարկուելով վիրաւորուած է: Յայտարարութենէն ժամը առաջ կառավարութիւնը յայտարարած էր, թէ երկրին հիւսիս-արեւմուտքը «յեղաշրջման փորձ» կատարուած է:

Ըստ կարգ մը տեղեկութիւններու, գորավարը սպաննուած է իր թիկնապահին կողմէ:

Կառավարութիւնը շաբաթ օր յայտարարած էր, թէ «զինեալ խմբաւորում մը» բնակչութեան թիւով երկրին երկրորդ մեծագոյնը եղող Ամհարա Նահանգին մէջ



«յեղաշրջումի փորձ» կատարած է, սակայն այդ փորձը ձախողած է:

Կառավարութիւնը զայն նկատեց ոչ սահմանադրական եւ շրջանին մէջ խաղաղութիւնը ակնաւահարելու նպատակով կատարուած փորձ մը:

Եթովպիական պետական պատկերասփիւռի կայանը նշեց, թէ Եթովպիական բանակէն զօրավար մը կը կանգնի Ամհարա Նահանգին մէջ կատարուած յեղաշրջումի փորձին ետին:

ՎՐԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՑՈՅՑԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՆ

«ՈՒՍԹԱԻ 2»-Ի ՂԵԿԱՎԱՐԸ ՅԱՅՏՆԱԾ Է, ՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ'ՈՒՂԵՆ ՆԵՐԽՈՒԹԵԼ ՊԱՏԿԵՐԱՍՓԻՌԻ ԿԱՅԱՆ



Վրաստանի իշխանութիւնները կրնան հրաման արձակել ներխուժելու ընդդիմադիր «Ռուսթալի 2» պատկերասփիւռի կայան, յայտարարած է կայանի տնօրէն Լիքա Գվարամիան: Այս մասին կը հաղորդէ «ՌԻԱ Նովոսթի» լրատու գործակալութիւնը: «Երկու աղբիւրներ տեղեկացած ենք, որ բռնի ուժով պիտի ներխուժեն մեր կայանը», ըսած է Գվարամիան՝ աւելցնելով, որ թթէ՝ նման բան ըլլայ, ապա ատիկա պիտի հասցնէ երկրին մէջ ժողովուրդի անկառաւարտի յուզումներու:

Շաբ.ը՝ էջ 8

ՏՕՆՈՅԵԱՆՆ ՈՒ ՄԻՆԱՆԵԱՆԸ ՔՐՆԱՐԿԱԾ ԵՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ՄԱՐԶԻՆ ՄԷՋ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՋԱՆՔԵՐՈՒ ՀԱՄԱՄԲԱՐԱՆ ՆԱԽԱԳԻԾԵՐ

22 յունիսին Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան Նախարար Դաւիթ Տօնյեան ընդունած է սփիւռքի գործերու ընդհանուր յանձնակատար Չարեհ Սիւստեանը, կը տեղեկացնէ պաշտպանութեան Նախարարութեան մամլոյ ծառայութիւնը: Հանդիպումի ընթացքին քննարկուած են պաշտպանութեան եւ անվտանգութեան մարզերուն մէջ համայն հայութեան ջանքերու համախմբման ուղղուած շարք մը ծրագրային Նախագիծեր:

Կարեւոր նկատուած է գիտութեան եւ կրթութեան, նորագոյն արհեստագիտութիւններու ներդրման, ռազմական բժշկութեան, ընկերային ապահովութեան եւ այլ մարզերու մէջ Հայաստանի եւ սփիւռքի տարբեր կառույցներուն միջեւ համագործակցութեան զարգացումը:

Շնորհաւորելով պատասխանատու պաշտօնին նշանակուիլը, պաշտպանութեան Նախարարը յաջողութիւն մաղջած է Չարեհ Սիւստեանին համահայկական գաղափարներու կենսի կոչման եւ Հայաստան-սփիւռք կապերու ամրապնդման գործին մէջ:



ԱՐԱՄ Ա. ԿԱԾՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ



Շաբաթ, 22 յունիս 2019-ին, Պիքֆայայի Ս. Աստուածածին վանքի վեհարանին մէջ, վեհափառ հայրապետին այցելեց Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Վահագն Աթաբեկեան:

Հանդիպումը առիթ մը եղաւ անդրադառնալու Հայաստան-սփիւռք գործակցութեան առնչուած հարցերուն: Անոնք նաեւ խորհրդակցեցան յառաջիկայ շաբաթ Անթիլիասի մայրավանքին մէջ տեղի ունենալիք հայ մամուլին նուիրուած համագալային համագումարին մասին:

Յայտնեց, որ յիշեալ համագումարին անձամբ ներկայ պիտի գտնուի Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի կինը՝ Աննա Յակոբեան:

ՊԵՐՐԻԻ «ԼԻԲԱՆԱՆՆ ՈՒ  
ԼԻԲԱՆԱՆՑԻՆԵՐԸ ՍՈՒՏ ՎԿԱՆԵՐ  
ԿԱՄ 30 ԱՐԾԱԹ ԴԻԱՄՈՎ  
ՊԱՂԵՍՏԻՆԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ  
ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ  
ՉԵՆ ԿՐՆԱՐ ԸԼԼԱԸ»

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի երեկ պատասխանեց Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփի փետային՝ Ժարետ Զուշների կողմէ «Դարու գործարք»-ին առաջին փուլին մասին կատարած յայտարարութեան:



Պըրրիի իր յայտարարութիւնը սկսաւ հետեւեալ կերպով. «Սպասելով լիբանանեան պաշտօնական եւ միացեալ կեցուածքի մը՝ «Դարու գործարք»-ի կնքահայր Զուշների յայտարարութեան մասին, որ կը ներառէ 50 միլիառ տոլարի ներդրումներ կատարել արաբական երկիրներու մէջ, որոնց շարքին՝ Նաեւ Լիբանանի, եւ որպէսզի լիբանանեան պաշտօնական լռութիւնը ոմանց կողմէ չնենարանսուի իբրեւ հաւանութիւն՝ ներկայացած թոյններուն, մենք կը հաստատենք, որ միակ ներդրումը, որ Լիբանանի մէջ ենթահող պիտի չգտնէ, այն ներդրումն է, որ Պաղեստինի եւ պաղեստինցիներուն իրաւունքներուն հաշուոյն կատարուելիք ներդրումն է, որ կը միտի պաղեստինցի ժողովուրդի տունդարձի իրաւունքը խլել եւ մայրաքաղաք Երուսաղէմով Պաղեստին մը կերտելու երազը սպաննել», ըսաւ Պըրրի:

Խորհրդարանի նախագահը հաստատեց, որ կը սխալի ո՛վ որ միլիառաւոր տոլարներու նշոյլներով կը փորձէ խաբէր Լիբանանը, որ տնտեսական տագնապի մը տակ կը տնջայ: «Սակայն Լիբանան իր սկզբունքները չի կրնար ուրանալ, եւ կը շեշտէ, որ ամէն իմաստով պիտի մերժէ պաղեստինցի գաղթականներուն բնակեցումը: Պաղեստինցի եւ արաբ մեր բոլոր եղբայրներուն հետ պիտի մերժենք այդ առաջարկը եւ անոր դէմ պայքարինք արդար դիմադրութեան առկայ բոլոր ձեւերով», շեշտեց Պըրրի:

Ան ցաւ յայտնեց, որ արաբ ժողովուրդին ամէնէն արդար դատը՝ Պաղեստինեան դատը դարձեալ զգեստուելու փորձի դէմ յանդիման կը գտնուի, այս անգամ սակայն դրամի ուժով:

«Պարոն Զուշներ, Լիբանանն ու լիբանանցիները սուտ վկաներ կ'ստան 30 արծաթ դրամով Պաղեստինը վաճառելու գործընկերներ չեն կրնար ըլլալ», ընդգծեց Պըրրի:

ՊԱՍԻԼ «ՊԱՍԼՊԵՔ-ՀԵՐՄԵԼԻ ՄԷՋ  
ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹԻՒՆԸ  
ԱՀԱՔԵԿՉՈՒԹԵՆԷՆ ՇԱՏ ԱՒԵԼԻ  
ՀՁՈՐ Է»

Արտաքին գործոց նախարար Ժըպարան Պասիլ շաբաթավերջին այցելեց Պաալպե-Յերմել, ուր հաստատեց, որ այդ շրջանին մէջ բազմազանութիւնը ահաբեկչութենէն շատ աւելի հզօր է:



Ան շեշտեց, որ Յերմել եղաւ այն շրջանը, որ զգեստեց հաւատարմորդական ահաբեկչութիւնը՝ աւելցնելով, որ Պաալպե-Յերմելի մէջ բազմազանութիւնը աւելի հզօր է, քան ահաբեկչութիւնը, իսկ այդ շրջանի բնակիչները ամէն գնով կ'ուզեցան Լիբանանի համար եւ պաշտպանեցին զայն:

Իր խօսքը ուղղելով անոնց, որոնք զինք համայնքային խտրականութիւն թարգմտելու յանցանքով ամբաստանած էին, Պասիլ ըսաւ. «Ո՛վ որ չի կրնար հանդուրժել, որ այս երկիրը բազմազանութեամբ պիտի ապրի ու գոյատեւէ, եւ թէ պիտի պաշտպանենք քրիստոնեաներուն իրաւունքը, թող չհանդուրժէ»:

Պասիլ նշեց, որ դիւրին չէ, որ Լիբանանը իբրեւ շրջանի ամէնէն փոքր երկիրը, ահաբեկչութեան եւ Իսրայէլի դէմ յաղթանակ արձանագրէ: «Լիբանան ինքզինք կը պաշտպանէ իր բազմազանութեամբ եւ ուրիշը ընդունելու սրտբացութեամբ, հետեւաբար անկարելի է զայն ահաբեկչութեան կողմէ խոցելի դարձնել», ըսաւ Պասիլ:

Ան նշեց, որ շրջանին մէջ Դիմադրութիւնը յաղթանակ արձանագրած է՝ աւելցնելով, որ ներկայիս կարիքը կայ տնտեսական Դիմադրութեան:

Ռաս Պաալպեի մէջ Պասիլ բացումը կատարեց Ազգային ազատ հոսանք կուսակցութեան կեդրոնին, ուր հաստատեց, որ ոչ ոք պէտք է բանակին նկատմամբ իրենց տաճած սերը փորձի ենթարկել: Ան հաստատեց, որ իրենք կը զօրակցին բանակի հրամանատարութեան՝ անոր կատարած բարեկարգումներուն առումով:

Շար.ը՝ էջ 3

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻԻ ԵՒ ԺՈՄՊԼԱԹԻ  
ՄԻՋԵՒ ՍՈՒՐ ԲԱՆԱՎԷՃ՝ ԹՈՒԻԹԵՐԵԱՆ  
ԳՐԱՌՈՒՄՆԵՐՈՒ ԸՆԴՄԵՋԷՆ

Հակառակ անոր որ ելեւտական եւ պետական ամավարկի խորհրդարանական յանձնախումբը բազմապատկած է իր աշխատանքները եւ խորհրդարանը կը պատրաստուի օրենսդրական նիստի մը, որ պիտի սկսի չորեքշաբթի, 26 յունիս 2019-ին, սակայն երկրին քաղաքական տարբեր ուժերուն միջեւ քաղաքական տարակարծութիւնները կը յամենան եւ մերթ Ընդ մերթ կը դրսեւորուին:

Այդ տարակարծութիւններուն շարքին էր երեկ գրեթէ ամբողջ օրուան ընթացքին տեւած սուր բանավեճը, որ թուիթթերեան գրառումներու ընդմէջէն դրսեւորուեցաւ վարչապետ Սաատ Հարիրիի եւ Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան ղեկավար Ուալիտ ժոմպլաթի միջեւ:

Վարչապետ Սաատ Հարիրի թուիթթերեան իր գրառումներուն մէջ, անդրադառնալով



Նալով Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան պատասխանատուներուն կողմէ գրուած յայտարարութիւններուն, անոնց պատասխանեց հետեւեալ ձեւով. «Ընկերվար յառաջդիմականը կը խօսի հաւատարմութեան մասին. օրուան զուշտը»:

Վարչապետ Հարիրի այլ գրառումով մը զգուշացուց Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան պատասխանատուները կրակին վրայ ձեթ թափելէ՝ նշելով, որ ատիկա իր վրայ մեծ ազդեցութիւն մը չի գործէր:

Հարիրի Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան պատասխանատուներուն ուղղեց Նաեւ այս գրառումը. «Չէք գիտեր, թէ ի՞նչ կ'ուզէք: Երբ իմանաք, զիս տեղեակ պահեցե՛ք»:

Միւս կողմէ, ժոմպլաթ կոչ ուղղեց իր հետեւորդներուն եւ համակիրներուն ուղղակի բանավեճեր չունենալու Մուսաբպալ հոսանքի հետեւորդներուն հետ:

Ան կոչ ուղղեց անոնց փոխադարձ նախատինքներու ծուղակին մէջ չիլնալու:



Իր կարգին, ճարտարարուեստի նախարար Ուալի Ապու Ֆաուլ յայտնեց, որ ժոմպլաթ հաւասարակշռութիւնը պահող ազդակը ըլլալու բարդոյթն չի տառապիր եւ չի փափաքիր իր քաղաքական կեցածքն ու կողմնորոշումը փոփոխութեան ենթարկել: Ան նշեց, որ Մուսաբպալ հոսանքին հետ տարակարծութիւնները զարմանալի չեն՝ աւելցնելով, որ պետական նշանակումներուն գծով ոչ ոք կրնայ Ուալիտ ժոմպլաթը շրջանցել:

Ան հաստատեց, որ Մուսաբպալ հոսանքին եւ Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան միջեւ յարաբերութիւնները լաւ վիճակի մէջ չեն գտնուիր՝ նշելով, որ Ընկերվար յառաջդիմական կուսակցութիւնն ու Ժողովրդավարական հանդիպում



պլոքը ընդդիմադիր կը նկատուին երկրին մէջ այսպէս կոչուած քաղաքական համաձայնութեան:

Ապու Ֆաուլ յայտնեց, որ ժոմպլաթ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի մօտ գործուած է նախկին նախարար Մարուան Համատէ՝ ընդգծելով, որ ժոմպլաթ եւ Պըրրի համաձայն են:

Նախարար Ապու Ֆաուլ շեշտեց, որ վարչապետին եւ ժոմպլաթի միջեւ հարցին պատճառը նշանակումները չեն:

Նշենք, որ աւելի ուշ Պըրրիի միջնորդութեամբ կարելի եղաւ խաղաղեցնել մթնոլորտը եւ բանավեճին վերջ դնել:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ՊՐՈՂՑՆԵՐ  
«ԳԱՅԻՄԱՆԷ» ՊԱՐԻ ՊՐՈՂՑ

ՀՈԱՍԱԽՈՐՈՒԹԵԱՄԸ՝  
ՏԻՐԱՆԻՏԻՍ ԿՆՏԱՆԻՍԻ  
ԼԻԲԱՆԱՆԻ ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ

**ՏԱՐԵԿԱՆ ԵԼՈՅԹ**

ՄՈՎԼԻ

ԿԱԹԻԼ ՄԸ ՄԵՆԻ

Աւագ ստուերանկարներով

ՄՈՎԱՐԸ ՄԵՐՈՒՄ ԸԼԼԱՄՈՎ  
**LASER**-ով  
ցուցադրութիւն  
կատարողութեամբ՝  
ՄԵՆԱ ԱՄՆԱԻ

ՅՈՒԶԱՄԵՆԷՆ ԹՈՒՄԱՆԵԱՆ - 150

Պարուոյց եւ գեղարուեստական ղեկավարներ՝  
Կարէն եւ Ժազլին Մակինեան

**Հինգշաբթի 27 եւ ուրբաթ 28 յունիս 2019,**  
երեկոյեան ժամը 8:00-ին, Էմիլ Լահուտ սրահ, Տրպայէ:

Թուագրուած տոմսերը ստանալու համար դիմել չամագայինի «Լ. Շանթ»  
(Պրոքձ Համուտ) եւ «Ժ. եւ Տ. Նայաւտուրեան» (Սնթիլիա) կեդրոններ:  
Հեռ. 01-249375 01-265899 04-715491

ՆԱԽԱՐԱՐ ԿԻՏԱՆԵԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝ ՏԸՊՊԱՅՅԵԻ ՄԷՋ  
ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԵՐԳԻ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՕՐԻՆ



Չքօսաշրջութեան նախարար Անետիս Կիտանեան երեկ հանրապետութեան նախագահ գօր. Միշել Աունը ներկայացուց Տրպայէի մէջ կազմակերպուած երգի միջազգային փառատօսին:

«Համտեւե երաժշտութիւնը» խորագիրը կրող փառատօսին իրենց մասնակցութիւնը բերին լիբանանեան եւ համաշխարհային խումբեր, որոնք 7 ժամուան ընթացքին ներկայացուցին արաբական եւ համաշխարհային երաժշտական ելոյթներ:

Շար.ը՝ էջ 3

ՌԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔԸ ՆԱԽԱԳԱՀԵՑ  
ՀԱՅՐԵՐՈՒ ՏՕՐԻՆ ՆՈՒԻՐՈՒՄԸ  
Ս. ՊԱՏԱՐԱՎԳԻՆ



Մարոնի համայնքի Պշարա Ռայի պատրիարքը երեկ Պքերքէի շրջափակին մէջ Նախագահեց կիրակի օրուան Ս. պատարագին, որ նուիրուած էր Հայրերու տօսին:

Իր քարոզին մէջ Ռայի պատրիարքը շնորհաւորեց լիբանանցի հայրերը՝ իրենց տօսին առիթով:

Միւս կողմէ, Ռայի պատրիարքը կոչ ուղղեց լիբանանեան պետութեան նշանակումները կատարելու ըստ ատակութեան:

Ան խստիւ դատապարտեց լիբանանեան պետութեան կողմէ ընկերային հաստատութիւններուն նկատմամբ ցուցաբերուած բացողումը, որ պատմական ու խղճի բացթողում եւ խախտում կը նկատուի:

ՖԵՐԶԼԻ «ՈՉԻՆՉ Կ'ԱՐԳԻԼԷ  
ՆԱԽԱԳԱՀ ԱՌԻՆԻ ՍՈՒՐԻԱ  
ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ»



Խորհրդարանի փոխնախագահ Էլի Ֆըրզլի երեկ Ղալ-պունի մէջ ներկայ գտնուեցաւ խորհրդաժողովի մը, որ կը կրէր «Արեւելքի քրիստոնեութիւնը» թիրախ» խորագիրը:

Այս առիթով Ֆըրզլի արտասանեց խօսք մը, որուն մէջ յայտնեց, որ Արեւելքի քրիստոնեաները թիրախ դարձնելուն պատճառը կրօնական չէ, այլ՝ քաղաքական, եւ ուղղակիօրէն կապուած է Իսրայէլի հիմնումին:

Ան նշեց, որ Արեւելքի մէջ քրիստոնեաները, յատկապէս Լիբանանի մէջ, շատ հալածուած են եւ յաճախ անիրաւած: «Հակառակ այս բոլորին, Լիբանանի քրիստոնեաները կը մնան լիբանանեան ընկերութեան կարողութիւններ ունեցող շերտը, իսկ մարոնի համայնքը կը կազմէ Արեւելքի մէջ քրիստոնեայ համայնքին ողնախիւղը», ըսաւ ան:

Ֆըրզլի նշեց, որ Լիբանան հասած սուրիացի տեղահանուածներուն նկատմամբ մօտեցումը ցեղապաշտական չէ:

«Ոչինչ կ'արգիլէ հանրապետութեան նախագահ գօր. Միշել Աունի Սուրիա այցելութիւնը, բայց եւ այնպէս տակաւին կացութիւնը չէ հասունցած», շեշտեց ան՝ աւելցնելով, որ սուրիացի տեղահանուածներու տունդարձին գծով լուրջ ջանքեր ի գործ կը դրուին:

Ֆըրզլի ընդգծեց Նաեւ պաղեստինցի գաղթականներուն տունդարձի արդար իրաւունքը:

Ֆըրզլի իր համոզումը յայտնեց Լիբանանը մէկ ընտրաշրջանի վերածելու եւ համայնքներուն կողմէ ներքին համամասնական դրութեամբ իրենց ներկայացուցիչները ընտրելու կարելորդութեան գծով՝ հաստատելով, որ ներկայիս Լիբանանի դիմագրուած իսկական հիմնահարցը երիտասարդ լիբանանցիներու արտագաղթն է:

ԱՆԴՐԱՐԱՐՁ

ԱՆԿԵՂԾՈՒԹԻ՞ՒՆ,  
ԹԵ՞ ՀԵՏԵՒԱՆՔԷՆ  
ԶԳՈՒՇԱՅՈՒՄ

Արաբական ծոցի շրջանին մէջ Իրանի եւ Միացեալ Նահանգներու միջեւ լարուածութեան մակարդակը շատ բարձր է, սակայն երկու կողմերն ալ կը պնդեն, թէ պատերազմ չեն ուզեր:

Ուաշինկթըն անցնող մէկ ամսուան ընթացքին ատոր շօշափելի փաստը տուաւ: Արդարեւ, 12 մայիսին Արաբական Միացեալ Էմիրութիւններու ծովափին մօտ քարիւղատար երկու նաւեր յարձակումի ենթարկուեցան, 13 յունիսին միւետոյն դէպքը կրկնուեցաւ այս անգամ Օմանի ծովուն մէջ, իսկ 20 յունիսին Իրան վար առաւ ամերիկեան լուսնափայտ անօդաչու թռչող սարք մը:

Եթէ Միացեալ Նահանգներ Իրանի դէմ պատերազմի ախորժակ ունենային, կրնային զայն շղթայազերծելու համար՝ վերոնշեալ դէպքերէն որեւէ մէկը օգտագործել իբրեւ «արդարացուցիչ դէպք յանցանաց», մանաւանդ որ ամերիկացի պաշտօնատարներն առաջին երկուքին պարագային յայտարարեցին, թէ բոլոր փաստերը ցոյց կու տան, թէ անոնց պատասխանատուն Իրանի իսլամական հանրապետութիւնն է: Այդ դէպքերուն իսկական պատասխանատուն, սակայն, հաւանաբար Ուաշինկթըն-Թեհրան զինուորական բախումի մը հրահրման մէջ շահ ունեցող երրորդ կողմ մըն է՝ ամենայն հաւանակաւորութեամբ Իսրայէլը: Ապա վրայ հասաւ երրորդ դէպքը, որ արդէն, բացայայտութիւն իրանեան արարք մըն էր: Ուաշինկթըն այդ դէպքերը կամ անոնցմէ որեւէ մէկը կրնար իբրեւ պատրուակ օգտագործել, բայց երեքն ալ եկան ու անցան, սակայն աղետալի պատերազմին փողը չհնչեց:

Յստակ է, թէ Միացեալ Նահանգներ իսկապէս Իրանի հետ ուղղակի ճակատումի մը կամ առնուազան ատոր գինը վճարելու կամքը չունին: Եւ այդ է պատճառը, որ այսօր այս բոլորէն ետք կը կրկնէ Իրանի դէմ յանելալ պատժամիջոցներ հաստատելու յանկերգը: Ատիկա արդեօք անկեղծութեան, հետեւանքներէն զգուշացման, թէ՞ հաւասարապէս երկուքին կարելի է վերագրել: Յամենայն դէպս, կը թուի, թէ Ուաշինկթըն-Թեհրան պատերազմի մը վտանգը մօտալուտ չէ, սակայն այդ վտանգին հաւանականութիւնը կրնայ հետզհետէ բարձրանալ, քանի կը մօտենայ Միացեալ Նահանգներուն մէջ նախագահական ընտրութեան ժամկետը, մանաւանդ եթէ ընտրական քարոզարշաւի ընթացքը չըլլայ գործող նախագահին ի նպաստ:

ՎԱՅՐԱՄ ԷՍՄԻԵՆՆ

ՆԱԽԱՐԱՐ ԿԻՏԱՆԵԱՆ ...

Շարունակուած 2-րդ էջէն

Տարբեր երկիրներէ ներկայ գտնուող աւելի քան երկու հազար հանդիսատեսներ վայելեցին Տըպպայէի փառափոխը, որուն ներկայ գտնուեցան նաեւ Հայկական երեսփոխանական պլոքի անդամ, երեսփոխան Յակոբ Թերզեան, Լիբանանեան ուժեր կուսակցութեան երեսփոխան Էտի Ապի Լաման, Տըպպայէի, Չուք Խարապի, Աուքարի եւ Պալլանտի քաղաքապետները, ինչպէս նաեւ մեծ թիւով քաղաքական անձնաւորութիւններ, թաղապետներ եւ ընկերային միութիւններու նախագահներ:

Նախարար Կիտանեան ուրախութիւն յայտնեց, որ ինք բացումը կը կատարէ առաջին փառատօնին, որ կը վայելէ զբօսաշրջութեան նախարարութեան հովանաւորութիւնը:

Ան հաստատեց, որ այս տարի Լիբանանի զբօսաշրջական եղանակը պիտի ըլլայ խոստմնալից՝ աւելցնելով, որ տեղի պիտի ունենան մեծ թիւով փառատօներ՝ լիբանանեան տարբեր շրջաններուն մէջ:

Նախարար Կիտանեան յայտնեց, որ նախագահ Աուն Լիբանանի զբօսաշրջական մեծ փառատօներուն հովանաւորն է եւ իբրեւ այդպիսին ան մօտէն կը հետեւի զբօսաշրջութեան նախարարութեան աշխատանքներուն ու որդեգրած քայլերուն, յատկապէս՝ Լիբանան այցելող արաբ եւ օտար զբօսաշրջիկներուն ու արտերկրի լիբանանցիներուն տրուած դիրութիւններուն:

ՄԱՀԱՁԳ

Տէր եւ տիկին Ռաֆֆի Պալապանեան եւ զաւակունը Տէր եւ տիկին Շահէ Պալապանեան եւ զաւակունը Հանգուցեալ Մաթնոս Նիրբէթլեանի ընտանիք Հանգուցեալ Մատլեն Փաթաքեանի ընտանիք Հանգուցեալ Մարի ժան Գութունեանի ընտանիք Տէր եւ տիկին Աբրահամ եւ Հենրիէթ Մալեան

եւ զաւակունը

Պալապանեան եւ Նիրբէթլեան ընտանիքներ Գասապեան եւ Ինճեան ընտանիքներ Փաթաքեան եւ Գութունեան ընտանիքներ Մալեան ընտանիք եւ համայն ազգականներ կը գումեն իրենց մօր, մեծ մօր, հորաքրոջ, մորաքրոջ եւ հարազատին՝

ԺԱՆԵԹ ՊԱԼԱՊԱՆԵԱՆԻ  
(Ծնեալ՝ ՆԻՒՐԲԷԹԼԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ ուրբաթ, 21 յունիս 2019-ին: Յուդարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարւի այսօր՝ երկուշաբթի, 24 յունիսին, կէսօրէ ետք ժամը 2:00-ին, Չալքայի Հայ կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխարդուի Պուրճ Համուտի Հայ կաթողիկէ գերեզմանաւունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին թաղումէն առաջ եւ ետք, կէսօրէ առաջ ժամը 11:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 6:00, Չալքայի Ս. Խաչ եկեղեցւոյ սրահին մէջ, իսկ երեքշաբթի, 25 յունիսին, կէսօրէ առաջ ժամը 11:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 6:00, Նոյն վայրին մէջ:

ԼՈՒՐԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԵՆ

ԶԱՀԼԷԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ՆՇՈՒՄ

Երեկ՝ կիրակի, 23 յունիսին, Ս. Գրիգոր Լուսաւորիչի Խոր Վիրապէն ելլելու տօնն էր, որ նաեւ կը զուգահիշէր Չահլէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին: Առ այդ, եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ

Ս. պատարագ եւ կատարուեցաւ մատաղօրինեք: Պատարագը մատուցեց եւ օրուան պատգամը ուղղեց Լիբանանի թեմի քարոզիչ Անանիա Ծ. վրդ. Գունանեան: Ան նկատել տուաւ, որ Ս. Գրիգոր Լուսաւորիչ հայ եկեղեցւոյ կարեւորագոյն սուրբերէն մէկն է, որովհետեւ իր օրով եւ իր հրաշքին ճամբով մենք 301 թուին դարձանք քրիստոնեայ եւ Հայաստանի մէջ քրիստոնեութիւնը ընդունուեցաւ իբրեւ պետական կրօն:

Հայր սուրբը անդրադարձաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչի կեանքին, անոր Խոր վիրապ մտնելուն եւ ապա Տրդատ թագաւորի հրամանով դուրս բերուելուն՝ Տրդատը բժշկելու համար: «Այս պատմութիւնը մենք պետք է լսենք հաւատքով: Մենք մոռցած ենք մեր սուրբերը եւ աւելի կարեւորութիւն կու տանք օտար սուրբերուն, որոնք մեր եկեղեցւոյ կեանքին մէջ աւելի յարգի են, քան մեր սուրբերը» հաստատեց Անանիա Ծ. վրդ. Գունանեան՝ շեշտելով, որ մեր սուրբերը իրենց կեանքը գոհեցին քրիստոնեութեան համար: Շարունակելով իր խօսքը՝ հայր սուրբը շեշտեց, որ մենք մեր ունեցածին արժեքը չենք գիտնար, սակայն երբ կորսնցնենք զայն, այն ատեն կը գիտակցենք անոր կարեւորութեան:

Անանիա Ծ. վրդ. Գունանեան հարց տուաւ, թէ արդեօք պարզ մարդ մը պիտի կարենա՞ր երկար տարիներ մնալ Խոր Վիրապին մէջ, եթէ Աստուծ զինք չկերակրէր կամ չխնամէր, հետեւաբար ան սուրբ էր, որ չիմացաւ այդ չարչարանքին: «Եթէ մենք մեր սուրբերը չարգենք կամ անոնց չաղօթենք, ուրիշները պիտի չաղօթեն անոնց: Եթէ մենք փորձենք մեր սուրբերը հրաւիրել մեր կեանքներուն մէջ, պիտի տեսնենք, որ անոնք Նոյն գօրութիւնը եւ երբեմն աւելին ունին, քան օտար սուրբերը, սակայն կարեւորը մեր հաւատքն է անոնց նկատմամբ», շեշտեց Անանիա Ծ. վրդ. Գունանեան:

Անդրադառնալով հոգեւորականներու առաքելութեան, որ ազգին անշահախնդիր ծառայութիւնն է, հայր սուրբը վեր առաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հովիւ Ռուբէն քնիլ. Միսիսեանի քահանայական վաստակը՝ հաստատութիւն, որ Լիբանանի թեմի առաջնորդ Նարեկ արքեպիսկոպոս, գնահատելով քահանայ հօր կատարած աշխատանքը, խնդրած է Մեծի Տանն Կիլիկոյ Արամ Ա. կաթողիկոսէն, որ ծաղկեայ փիլոն կրելու իրաւունք շնորհէ քահանայ հօր: Վեհափառ հայրապետը, ընդառաջելով սրբազան հօր խնդրանքին, ուղարկած է սրբատառ կոնդակը, ըստ որուն քահանայ հօր պիտի շնորհուր ծաղկեայ փիլոն կրելու իրաւունք: «Հոգեւորականի չափաւիշը ժողովուրդի սէրն ու յարգանքն է եւ անոր յաջողութիւնը ժողովուրդին իր կողքին կանգնիլն է», շեշտեց Անանիա Ծ. վրդ. Գունանեան եւ կարգաւէ ետք կոնդակը յանձնեց փիլոնը Ռուբէն քնիլ. Միսիսեանին՝ շնորհաւորելով զինք եւ մաղթելով, որ ան իր ծառայութիւնը առաւել եւս ծաղկեցնէ եւ պայծառացնէ Չահլէի հաւատաւոր ժողովուրդին համար:

Պատարագի աւարտին կատարուեցաւ մատաղօրինեք:

ՍՐԱՌՑ ՀՈՒՓՈՒՍԵԱՆՑ ԵՒ ՍՐԱՌՑ  
ԳԱՅԵԱՆԵԱՆՑ ԿՈՅՆԵՐՈՒ ՏՕՆԻ ՆՇՈՒՄ

Շաբաթ, 22 յունիս 2019-ին, երեկոյեան ժամը 6:00-ին, Նոր Ատանայի Ս. Աստուա-



տացեալ ժողովուրդին, թափօրը մուտք գործեց եկեղեցի, ուր մատուցուեցաւ Ս. պատարագ: Պատարագը մատուցեց եւ ժողովուրդին իր պատգամը ուղղեց Լիբանանի թեմի քարոզիչ Անանիա Ծ. վրդ. Գունանեան: Ան նկատել տուաւ, որ բոլորս լսած ենք կոյսերու նահատակութեան պատմութիւնը, թէ ինչպէ՛ս չարչարուեցան, բայց իրենց Նուիրումին եւ հաւատքին համար նահատակեցին իրենց անձերը՝ հաւատալով, որ իրենց անձերը կարելու չէ աշխարհի վրայ, այլ՝ կարելուրը իրենց երկնային նահատակութիւնն է: Հայր սուրբը ըսաւ, թէ Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ բոլոր սուրբերը ընդհանրապէս իրենց մարմինները գոհեց են Քրիստոսի, երկնաւոր առաքելութեան եւ յաւիտենական կեանքի համար: «Սուրբերը պատահականօրէն սուրբ չեն կոչուիր: Անոնք կրցած են ապրիլ այն ճանապարհին մէջ, ինչ որ Քրիստոս իր երկրաւոր առաքելութեան ընթացքին սորվեցուց, պատգամեց, ապրեցաւ եւ ուզեց, որ մարդիկ եւս ապրին», հաստատեց Անանիա Ծ. վրդ. Գունանեան՝ աւելցնելով, որ սուրբերը ապրած են երազելով, փափաքելով երկինքի արքայութեան:

Շարունակելով իր խօսքը՝ հայր սուրբը ցաւով յայտնեց, թէ իբրեւ հայ ժողովուրդ եւ առաքելական եկեղեցւոյ պատկանող զաւանդներ դժբախտաբար այսօր մենք հեռացած ենք մեր սուրբերէն: «Մեր առաքելական եկեղեցին հիմնուած է Ս. Գրիգոր Լուսաւորիչի, Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս առաքելներու աճիւններուն վրայ, անոնց արեան նահատակութեամբ, որոնց կեանքը, պատգամը եւ առաքելութիւնը այսօր մենք կը տեսնենք Հռիփսիմեանց կոյսերու նահատակութեան մէջ», շեշտեց Անանիա Ծ. վրդ. Գունանեան՝ աւելցնելով, որ Նոյն Գրիգոր Լուսաւորիչն էր, որուն Խոր Վիրապէն ելլելէն ետք առաջին գործը եղաւ հաւաքել սուրբերու Նուիրական մատնքները եւ թաղել զանոնք: Նոյն Գրիգոր Լուսաւորիչն էր, որ հետեւելով կոյսերու ճանապարհին, ջրանձնուեցաւ: «Այսօր, իբրեւ եկեղեցւոյ զաւակներ, մենք մեր կեանքին մէջ քանի՞ անգամ մեր սուրբերուն բարեխօսութիւնը խնդրած ենք», հարց տուաւ Անանիա Ծ. վրդ. Գունանեան՝ հաստատելով, որ մենք՝ իբրեւ ժողովուրդ, մոռցած ենք մեր սրբութիւնները, մեր եկեղեցական աւանդութիւններն ու ծեսերը եւ կառչած ենք Նիւթականին, մինչդէռ մեզի համար կարեւորը հոգեւորն է, խորհուրդն է, նպատակն է եւ այդ նպատակէն վերջ Քրիստոսի թագաւորութեան եւ արդարութեան հասնելու փառքը: Եզրափակելով իր խօսքը՝ հայր սուրբը շեշտեց, որ Հռիփսիմեանց



ծածին եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր կերպով նշուեցաւ Սրբոց Հռիփսիմեանց եւ Սրբոց Գայեանեանց կոյսերու տօնը:

Արդարեւ, եկեղեցւոյ շրջափակին մէջ գտնուող Ս. Հռիփսիմէի մատրան դիմաց կատարուեցաւ ժամերգութիւն, որմէ ետք սուրբերու մատուցով կազմուեցաւ թափօր եւ առաջնորդութեամբ թեմի քահանայից դասուն, մասնակցութեամբ հաւա-

կոյսերու պատգամն է, որ դառնանք Քրիստոսի, դառնանք սուրբերուն, պահանջենք անոնց բարեխօսութիւնը, խնդրենք անոնց ներգործութիւնը մեր կեանքին մէջ, տեսնենք Քրիստոսի ճանապարհը, որպէսզի անով մենք ճշմարտութիւնը ապրինք մեր կեանքին մէջ:

Պատարագի աւարտին կատարուեցաւ ջրօրինեք:

ՄԵՐ ԿՈՐՈՒՍՆԵՐԸ

ՄԱՀԱՅԱԾ Է ԳՐՈՂ  
ԿԱՐԻՆԷ ԱՇՈՒՂԵԱՆԸ

Յետ երկաւորութեան հիւանդութեան, Երեւանի մէջ իր մահկանացուն կնքած է գրող, հրապարակախօս եւ լրագրող Կարինէ Աշուղեանը:



Ծնած է Հայաստանի Արարատի շրջանի (այժմ՝ մարզ) Տափերական գիւղին մէջ:

Աւարտած է Երեւանի պետական համալսարանի փիլիսոփայութեան եւ ընկերաբանութեան բաժանմունքը, ապա՝ Հայաստանի Գիտութիւններու ազգային ակադեմիայի փիլիսոփայութեան եւ իրաւունքի հիմարկի **ասպիրանտուրան**: Աշխատած է Նոյն հիմարկին մէջ՝ իբրեւ հայ փիլիսոփայութեան պատմութեան բաժնի կրտսեր գիտաշխատող, Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան «Հայ գինուոր» պաշտօնաթերթին մէջ եւ իբրեւ լրագրող՝ տարբեր լրատուամիջոցներու մէջ: 1998-2008-ին եղած է «Արարատ» մարզային թերթի գլխաւոր խմբագիրը:

Պարգետատրուած է Հայաստանի մշակոյթի նախարարութեան «Գրիգոր Նարեկացի» յուշամետալով: Նշենք, որ բանաստեղծութիւններու եւ արձակ գրութիւններու հեղինակ Կարինէ Աշուղեան ռուսերէնէ հայերէնի թարգմանած է ՀՀ-ի յայտնի գործիչ, հանգուցեալ Վահան Յովհաննիսեանի «Մանտիլիոն» վեպը:

ՄԱՀԱՅԱԾ Է ՅՈՐԻՈՂ ՍՏԵՓՆԷ ՇԱՔԱՐԵԱՆԸ

Հայաստանի Կոմպոզիտորներու միութենէն կը տեղեկացունեն, որ մահացած է միութեան անդամ, Հայաստանի ժողովրդական արուեստագետ, յօրինող Ստեփան Շաքարեանը:



«Նորին ցաւով կը տեղեկացնենք, որ մահացած է Հայաստանի Կոմպոզիտորներու միութեան անդամ, Հայաստանի ժողովրդական արուեստագետ, յօրինող Ստեփան Շաքարեանը», նշուած է հաղորդագրութեան մէջ:

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԱՅՍՕՐ ...

Շարունակուած Ա. էջէն

Մինչ այդ, Իրանի նախագահ Հասան Ռուհանի շեշտեց, որ ամերիկեան անօդաչու թռչող սարքի իրանեան օդային տարածք մուտք գործելը «շրջանին մէջ Նոր լարուածութեան մը սկիզբն է»:

«Միջազգային ընտանիքը պետք է պատշաճ կերպով հակադարձէ ամերիկեան անօդաչու թռչող սարքի իրանեան օդային տարածքին դէմ ոտնձգութիւն կատարելու քայլին», նշեց Իրանի նախագահը:

«Շրջանի անվտանգութեան ու կայունութեան երաշխաւորումը միջազգային պատասխանատուութիւն մըն է, եւ ամերիկեան միջամտութիւնը (շրջանի) խնդիրներուն հիմն է», ըսաւ ան:

«Միացեալ Նահանգներ օրինականացուցին մեր ժողովուրդին դէմ տնտեսական ահաբեկչութիւն եւ հաստատեցին պատժամիջոցներ, որոնք կը ներառեն դեղորայքն ու սննդեղէնը», նշեց Իրանի նախագահը:

ՊԱՄԻՆ «ՊԱՍԼՊԵՔ-ՀԵՐՄԵԼԻ ...»

Շարունակուած 2-րդ էջէն

ՊԱՄԻՆ ԽՏԸՐԻ ՍՕՏ

Պապիլ հանդիպում մը ունեցաւ նաեւ Պապլեք-Հերմելի նահանգապետ Պաշիր Խտըրի հետ: Հանդիպումին ընթացքին քննարկուեցան Պապլեք-Հերմելի իրադարձութիւնները, ինչպէս նաեւ շրջանին դիմագրաւած մարտահրաւերները:



Հանդիպումին ընթացքին Խտըր Պապիլին յանձնեց Սայիտաթ Պաշուաթի լուսանկարը կրող յուշանուէր մը:

## ՈՒԺԻ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ (Power diplomacy)

Մասնագիտական գրականությունն մեջ առանձնացում են ուժային քաղաքականությունն, դիվանագիտության մի շարք արհեստագիտություններն կամ մեթոտներ, որոնց էլ կ'անդրադառնանք սույն նիւթում։ Թեեւ միջազգային յարաբերություններում ուժի դիւանագիտութեան մեթոտները նոր չեն կիրառութիւն ստացել, այդուհանդերձ, վերջին տարիներին դրանց մասնագիտական սահմանումներ տալու անհրաժեշտութիւն է առաջացել։ Սա թերեւս պայմանաւորուած է նոր աշխարհակարգում առանձնացուած մեթոտների տեսութեան զարգացման եւ կիրառութեան շրջանակների ընդլայնման իրողութիւններով։

#### Փափուկ եւ կոշտ ուժի դիւանագիտութիւն

«Փափուկ ուժ» (Soft power) հասկացութիւնը սահմանել է ամերիկացի յայտնի քաղաքագետ Ճոզեֆ Նայը դեռեւս նախորդ դարի 80-ականներին։ Այդ հարցերին նա մանրամասն անդրադարձել է 1990 եւ 2004թթ. լոյս տեսած իր երկու աշխատութիւններում (մանրամասն տե՛ս <http://www.kropfpolisci.com/exceptionalism.nye.pdf>, [https://www.academia.edu/2869788/Soft\\_Power\\_the\\_Mean\\_s\\_to\\_Success\\_in\\_World\\_Politics\\_-\\_Joseph\\_S.\\_Nye\\_Jr](https://www.academia.edu/2869788/Soft_Power_the_Mean_s_to_Success_in_World_Politics_-_Joseph_S._Nye_Jr))։

«Փափուկ ուժ» հասկացութիւնում ընդգծում էր հոգեւոր-գաղափարական, քաղաքակրթական-մշակութային արժեքների կարելությունը։ Առանձնակի նշանակութիւն էր տրոււմ միջազգային յարաբերութիւններում տուեալ պետութեան միջազգային կշիռի ու հեղինակութեան ամրակոմման, ազդեցութեան տարածման հարցերում այդպիսի գործօններին, ինչպիսիք են լեզուն, մշակոյթը, կրօնը եւ այլն։ Ինչպէս նշուեց, մասնագիտական տեսութիւնում ուժի դիւանագիտութեան հասկացութիւնների սահմանումները թեւեւ մի քանի տասնամեակների պատմութիւն ունեն, սակայն դրանց կիրառութիւնը գալիս է դարեւրի խորքից։ Փափուկ ուժի դիւանագիտական հնարքների մասին անդրադարձներ գտնում ենք հին չինական փիլիսոփայութիւնում։ Որպէս փափուկ ուժի դասական օրինակ՝ նշում էր կանաչհոլովները, կանաչի գրաչուրթիւնը։

Պատահական չէ, որ մասնագիտական գրականութիւնում փափուկ ուժի դիւանագիտութիւնը ներկայացում է նաեւ որպէս համովունքների, գրաւչութեան դիւանագիտութիւն՝ ստանալով «գրաւիչ ուժ» (Attractive power) սահմանումը։ Եւ իսկապէս, փափուկ ուժը տուեալ պետութեան կողմից առանց բռնութեան կամ ճնշման, գործընկերների կամււոր մասնակցութեան ապահովմամբ դրուած նպատակին հասնելու ունակութիւնն է։

Փափուկ ուժի դիւանագիտութիւնը մեծ աւանդոյթներ ունի չինական դպրոցում։ Վերջին տարիներին Չինաստանի իշխանութիւնները մեծապէս կարելւորում են արտերկրում չինարէն լեզուի ու ազգային մշակոյթի տարածման քաղաքականութիւնը։ Արտերկրում մեծ տարածում ունեն Կոնֆուցիոսի կերպրութիւնը։

Փափուկ ուժի կիրառման զգալի փորձ է կուտակել նաեւ Ռուսաստանը՝ իր Рескый мир միջազգային նախագծով։ Վերջին տարիներին ռուսաստանեան բուհերը յատուկ կրթական ծրագրեր են ներկայացնում արտերկրից ուսանողների հոսքերի ապահովման նպատակով։ Այդ հարցում յաջողութիւններ են արձանագրուել յատկապէս Չինաստանից ուսանողների ներգրամման ուղղութեամբ։ Այսօր չին ուսանողները սովորում են Ռուսաստանի շուրջ 85 քաղաքների աւելի քան 150 համալսարաններում։

Դարերի պատմութիւնն ունի փափուկ ուժի հնդկական փորձը։ Ըստ փորձագետների՝ Յնդկաստանի կերպարը համեմատւում էր կանաչհոլութեան հետ, որը մարմնաւորում էր արեւելեան եւ ազգային մշակոյթը, հնդկական փիլիսոփայութիւնը, կրօնն ու Յնդկաստանի հօգրութիւնը։ Ժամանակակից Յնդկաստանը փորձում է աշխարհին ներկայանալ արհեստագիտութիւնների ու նորարարութիւնների ապրանքանիշով՝ այն համատեղելով հոգեւոր-մշակութային ժառանգութեամբ, նաեւ՝ շարժապատկերով, նորածնութեամբ եւ այլն։

Փափուկ ուժի դիւանագիտական հնարքների, արհեստագիտութիւնների բազմազանութեամբ ու դրանց կիրառութեան հարուստ փորձով առաջատարներից է Միացեալ Նահանգները։ Մասնագիտական գրականութիւնում ամերիկեան փափուկ ուժը ներկայացում է որպէս դասական դիւանագիտութիւն։ Առաջնակարգ նշանակութիւն է տրոււմ ամերիկեան կենսակերպին, ազատութեան (Liberty) գաղափարին, որը փորձել են որպէս ապրանքանիշ տարածել արտերկրում։ Մեծ տեղ է յատկացում լեզւին, շարժապատկերին, ժամանակակից երաժշտութեանը եւ այլն։ Բաղաքական գործընթացների առումով փափուկ ուժի արհեստագիտութիւններից են Ուաշինկթընի՝ ժողովրդավարութեան, մարդու իրաւունքների պաշտպանութեան հարցերում առաջ քաշած ռազմավարական մօտեցումները։ Միացեալ Նահանգներում այսօր փորձում են համատեղել փափուկ ուժի դիւանագիտութեան մշակութային բաղադրիչը նորարարութիւններով, գիտարհեստագիտական առաջընթացով ու կրթութեամբ։

Ճոզեֆ Նայի գնահատականով, փափուկ ուժը կարելոր գործօն է եղել Սառը պատերազմում ԽՍՀՄ-ի Նկատմամբ Միացեալ Նահանգների յաղթանակի հարցում։ Նա առանձնացնում է ամերիկեան կրթական կեդրոնների դերը, որտեղ ուսում են ստանում արտերկրի ուսանողները, որն ամերիկեան արժեքների վերաբերեալ դրական կերպար ու ապրանքանիշ է ձեւաւորում նրանց գիտակցականում։

Փորձագետներից ոմանք այն կարծիքն են առաջ քաշում, որ գունւաւոր յեղափոխութիւնները նոյնպէս մշակել են փափուկ ուժի դիւանագիտութեան տեխնոլոգիական գործիքակազմով (աւելի մանրամասն՝ [http://www.spa.msu.ru/uploads/files/publikazii/russianjls\\_2016\\_1\\_naumov.p.pdf](http://www.spa.msu.ru/uploads/files/publikazii/russianjls_2016_1_naumov.p.pdf))։ Այդ մօտեցման համաձայն, գունւաւոր յեղափոխութիւնների կարելոր առանձնայատկութիւններից մէկն այն էր, որ այն, որպէս կանոն, ուղեկցում է ոչ բռնի ճանապարհով, ինչը «փափուկ ուժ» հասկացութեան գլխաւոր բնութագրիչներից է։

Ամերիկացի քաղաքագէտը դիտարկում է «փափուկ ուժ» հասկացութիւնը նաեւ ՕԹԱՆ-ի համաժիրում։ Ըստ նրա դիտարկման, ՕԹԱՆ-ի փափուկ ուժ ասելով՝ պէտք է հասկանալ այն, որ Դաշինքը դուրս է գալիս զուտ ռազմական կամ պաշտպանական գործունեութեան սահմաններից եւ իր առաքելութիւնը կեդրոնացնում է հանրային դիւանագիտութեան ուղղութեամբ՝ կառոյցը հանրութեան համար գրաւիչ եւ ընկալելի դարձնելու նպատակներով։

Փափուկ ուժի վարկանիշային՝ 2018թ. գէկոյցում (A Global ranking of Soft power) առանձնացուած 30 պետութիւնները գլխաւորում է Մեծ Բրիտանիան, որին յաջորդւմ են Ֆրանսան ու Գերմանիան։ 4-րդ հորիզոնականում

են Միացեալ Նահանգները։ Ըստ վարկանիշային այս զեկոյցի՝ փափուկ ուժի համաշխարհային ազդեցութեան ցուցիչով առաջատար են եւրոպական երկրները։ Մեծն Բրիտանիայի պարագայում, որպէս փափուկ ուժի հիմնական գործիքներ, նշում են մշակոյթը, շարժապատկերը, երաժշտութիւնը եւ այլն։ Որպէս փափուկ ուժի կիրառման արդիւնաւետ օրինակ՝ գէկոյցում առանձնացում էր Անգլիայի Բարձրագոյն լիկան (աղբիւրը՝ <https://softpower30.com/wp-content/uploads/2018/07/The-Soft-Power-30-Report-2018.pdf>)։

Ի տարբերութիւն փափուկ ուժի՝ կոշտ ուժը (Hard power) ելնում է ուժի ճնշման մեթոտաբանութիւնից։ Ըստ յաճախ կոշտ ուժի քաղաքականութիւնն ուղեկցում է երկրի ռազմական կամ տնտեսական լծակների, պատժամիջոցների բաւեցմամբ՝ դրամատւային հաշիւների, գումարների սառեցման միջոցով։ Յաճախ դրանք կիրառւում են միասին։ Մասնագիտական գրականութիւնում կոշտ ուժը սահմանւում է նաեւ որպէս յարձակողական ուժ։

#### Խելամիտ ուժ

Դիւանագիտութեան կամ քաղաքականութեան բաւական լայն լծակների հնարաւորութիւն է ընձեռում խելամիտ ուժ (Smart power) մեթոտը։ Մեթոտի վերաբերեալ մասնագիտական սահմանում կրկին գտնում ենք Ճոզեֆ Նայի քաղաքագիտական աշխատութիւններում։ Նայը, խելամիտ ուժ ասելով, հասկանում է կոշտ եւ փափուկ դիւանագիտութեան փոխլրացման, համատեղման քաղաքականութիւնը։ Խելամիտ ուժը ներառում է դիւանագիտական, քաղաքական, ուժային-ռազմական, տնտեսական, մշակութային-հոգեւոր եւ այլ ուղղութիւններով լծակներն ու գործիքակազմը։

Խելամիտ ուժի մեթոտը հայեցակարգային կիրառութիւն սկսեց ունենալ Միացեալ Նահանգներում՝ 2000-ականներից սկսած։ Դայեցակարգի հիմնական դրոյթներից մէկն այն էր, որ Միացեալ Նահանգներին անհրաժեշտ է թուլացնել երկրի մասնակցութիւնը միջազգային յարաբերութիւններին եւ դա փոխհատուցել միջազգային կազմակերպութիւնների ու հաստատութիւնների ներգրաււածութեան ընդլայնման հաշուին։ Դարցը կարելւորում էր յատկապէս Ուաշինկթընի՝ մերձաւորարեւելեան ռազմարշաի համապատկերում։ Եւ մեթոտի կիրառման անհրաժեշտութեան դիրքերից էր ժամանակին քանիցս խօսել Դիլարի Զլինթոնը (աղբիւրը <https://www.cbsnews.com/news/clinton-use-smart-power-in-diplomacy/>)։ Որպէս առաջնահերթութիւն՝ նշում էր միջազգային յարաբերութիւններում ՄԱԿ-ի՝ որպէս փափուկ ուժի դերակատարման ընդլայնման անհրաժեշտութեան մասին։

2006թ. Ճ. Նայը ղեկավարում էր Ռազմավարական եւ միջազգային հետազօտութիւնների կեդրոնի կողմից ստեղծուած Խելամիտ ուժի հարցերով յանձնաժողովը (Commission on Smart Power-Center for Strategic and International Studies)։ 2007թ. նոյեմբերին յանձնաժողովը գէկոյց պատրաստեց, որում վերահաստատում էր խելամիտ ուժը՝ որպէս նոր աշխարհակարգում Միացեալ Նահանգների առաջընթացի կամ համաշխարհային գերիշխանութեան վերականգնման ճիշդ ուղի (աղբիւրը՝ <https://www.csis.org/programs/smart-power-programs/smart-power-initiative>)։ Չեկոյցը կրում էր «Աւելի խելամիտ, աւելի անվտանգ Ամերիկա» (A Smarter, More Secure America) վերնագիրը (աղբիւրը՝ <https://www.csis.org/analysis/smarter-more-secure-america>, [https://csis-prod.s3.amazonaws.com/s3fs-public/legacy\\_files/files/media/csis/pubs/071106\\_csisasmarterpowerreport.pdf](https://csis-prod.s3.amazonaws.com/s3fs-public/legacy_files/files/media/csis/pubs/071106_csisasmarterpowerreport.pdf))։ Ուշագրւում այստեղ այն է, որ նման հայեցակարգային, ռազմավարական առաջարկներով հանդես եւ գալիս ուղեղային կեդրոնները։ Սա մեւ մեկ անգամ վերահաստատում է այն, որ Միացեալ Նահանգներում ուղեղային կեդրոններն ուրոյն մասնակցութիւն ու դեր ունեն որոշումների կայացման **մեքանիզմում**։

«Դենտ» ընկերութեան՝ 2005թ. «Չափելով ազգային հօգորութիւնը» (Measuring National Power) գէկոյցում առաջարկւում էր պետութեան հաւաքական հօգորութիւնը գնահատել կամ հաշուարկել նաեւ եւ փափուկ ուժի մեթոտաբանութեամբ։ Չեկոյցում կարելորութիւն էր տրոււմ համաշխարհային գործընթացներում «ոչ պետական դերակատարների» (Non-state actors-NSAs) մասնակցութեան անհրաժեշտութեան հարցերին։ Առանձնացում էին ուղեղային կեդրոնները, մասնաւոր, վերազգային խոշորագոյն ընկերութիւնները եւ այլն։

Մասնագիտական գրականութիւնում առանձնացում է նաեւ «սուր ուժ» հասկացութիւնը (sharp power)։ Սուր ուժի արհեստագիական հնարքները բաւեցում են արտերկրի հասարակութիւններին ձեռնածութեան ենթարկելու միջոցով՝ երկրում ներքաղաքական անկայունութեան ստեղծման նպատակներով։ Արհեստագիտութիւններում մեծ կարելորութիւն է տրոււմ հանրութեան առանձնացուած շերտերում (նաեւ՝ խոցելի խմբերում) հոգեբանական-տեղեկատուական մեքանործման, հանրութեան բարոյալքման, մոլորեցման հարցերին։

#### Ամփոփում

Արտաքին աշխարհում պետութեան կերպարանաւորման կամ ապրանքանիշային հարցերը ժամանակակից միջազգային յարաբերութիւններին, ազգային քաղաքականութեան անբալտելի բաղադրիչն են։ Ի հարկէ, աշխարհի առաջատար, զարգացած երկրներն անհամեմատ մեծ հնարաւորութիւններ ունեն ազգային ապրանքանիշի համաշխարհայինացման գործում։ Սակայն այդ հարցում ոչ պակաս կարողութիւններ կան նաեւ փոքր ազգ-պետուկների համար։ Դասական օրինակներից մէկը Իսրայէլն է, որն աշխարհին այսօր ներկայանում է Start-up Nation ապրանքանիշով։

Կարծում ենք, որ ազգային կերպարի ստեղծման գործւմ Դայաւստաւը կարող է համատեղել իր քաղաքակրթական, հոգեւոր-մշակութային հարուստ ժառանգութիւնն ու զարգացող նորարարական-արհեստագիտական ներուժը։ Ի տարբերութիւն Իսրայէլի, որն ունի քաղաքական, տնտեսական եւ ռազմական ներուժ՝ համատեղելու փափուկն է կոշտ ուժի դիւանագիտութիւնը, Դայաւստաւը թելուս սկզբնական կիւլում պէտք է կեդրոնացնի իր միջոցները մեծապէս փափուկ ուժի արհեստագիտական մօտեցումների մշակման ու կիրառման ուղղութեամբ։ Դայութեանը շատ աւելի պատշաճաւոր հեռանկարներ կարող է տալ խելամիտ ուժի դիւանագիտութեան մշակումն ու դրա տեղայնացումը։

#### ԿԱՐԵՆ ՎԵՐԱՆԵՆԸ

*Տարածաշրջանային հարցերով փորձագետ*

## ԹՈՒՐԹԻՈՅ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՕԹԱՆ-Ի ԿՐՆԱՅ ՇՈՒՏՈՎ ԱՄԻՐՏԻԼ...

Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարարի պաշտօնակատար Փէրրիք Շենքիեն 6 յունիս 2019-ին կոշտ նամակ մը յղեց իր գործընկերոջ՝ Թուրքիոյ պաշտպանութեան նախարար Յուլուսի Աքարին։ Շենքիեն սպառնացած է վերջ դնել Թուրքիոյ մասնակցութեան՝ Միացեալ Նահանգներու օրուժի ամէնէն յառաջատար «Էֆ-35» հալածիչներու ծրագիրին եւ պատժամիջոցներ կիրառել, եթէ Թուրքիա շարունակէ յամառիլ յաջորդ ամիս Ռուսիայէն «Էս-400» հրթիռներու ձեռք բերելու հարցին մէջ։ Ռուսական հրթիռները անհամատեղելի են ՕԹԱՆ-ի զինական համակարգին եւ վտանգի կ'ենթարկեն «Էֆ-35» հալածիչներու աշխատանքը, այսպիսով սպառնալով Միացեալ Նահանգներու ազգային ապահովութեան։

Թուրքիոյ նախագահ Էրտողան բազմիցս մերժած է Միացեալ Նահանգներու բողոքները եւ պնդած՝ ռուսական հրթիռներ ձեռք բերելու վրայ, որոնց համար Թուրքիա 2,5 միլիառ տոլարի վարկային համաձայնագիր տոորագրած է Ռուսիոյ հետ։ Զանի մը թուրք զինուորականներ արդէն կը մարզուին Ռուսիոյ մէջ, թէ ինչպէ՛ս պէտք է աշխատցնեն նոր հրթիռները։ Միեւնոյն ժամանակ, Միացեալ Նահանգները Թուրքիան տեղեակ պահած են, որ թուրք օդաչուները, որոնք քանի մը ամիսէ ի վեր «Էֆ-35» հալածիչներու վերապատրաստման դասընթացքներու կը հետնէին Միացեալ Նահանգներու մէջ, պէտք է երկրէն հեռանան 31 յուլիս 2019-ին։

Պաշտպանութեան նախարարի պաշտօնակատար Շենքիենի նամակը ցնցում առաջացուց Թուրքիոյ արտաքին քաղաքականութիւնը եւ ապահովութիւնը կառավարող շրջանակներուն մէջ, որովհետեւ Թուրքիան տակալին չի գիտեր, թէ «ինչպէ՛ս պատասխանե՛», ըսաւ ապահովութեան գծով բարձրաստիճան թուրք պաշտօնէյար մը «Լի Մոնիթթօր»-ին։ Միաժամանակ, Թուրքիա վճարած է աւելի քան մէկ միլիառ տոլար՝ 100 հատ «Էֆ-35» հալածիչներ ձեռք բերելու համար։ Նախագահ Էրտողան յայտարարեց, որ Միացեալ Նահանգներէն կը պահանջէ վերադարձնել այդ գումարը։ Աւելի՛ն. Թուրքիա՝ իբրեւ «Էֆ-35» ծրագրի գործընկեր, կ'արտադրէ հալածիչներու որոշ մասեր, որոնք այլեւ չեն ստացուիլ Թուրքիայէն։

Շենքիեն գրած է Թուրքիոյ պաշտպանութեան նախարարին. «Էֆ-35»-ի նկատմամբ ձեռնարկուած բոլոր գործողութիւնները հիմնուած են վտանգներու վրայ՝ կապուած «Էս-400»-ներու առկայութեան հետ Թուրքիոյ մէջ, եւ անոնք անջատ են Ռուսիոյ առնչուող «Պատժամիջոցներու միջոցով Ամերիկայի հակառակորդներուն հակազդելու մասին» օրէնքի (CAATSA) պատժամիջոցներէն։ Միացեալ Նահանգներու Զոնկրեւը վճռականօրէն տրաւարդուած է՝ տեսնելու CAATSA-ի պատժամիջոցներու կիրարկումը Թուրքիոյ նկատմամբ, եթէ Թուրքիա ձեռք բերէ «Էս-400»։ Բացի «Էֆ-35»-ի նման ծրագիրներու ապահովութեան սպառնալիքէն Թուրքիոյ կողմէ «Էս-400»-ի գնումը կը խոչընդոտէ ձեր երկրին հնարաւորութիւնը՝ արտապնդելու կամ պահպանելու համագործակցութիւնը Միացեալ Նահանգներու եւ ՕԹԱՆ-ի հետ՝ յանգեցնելով Թուրքիոյ ռազմավարական եւ տնտեսական չափազանց կախուածութեան Ռուսիայէն եւ խոչընդոտելու Թուրքիոյ հօգօր պաշտպանական արդիւնաբերութեան եւ տնտեսական զարգացման յաւակտու նպատակները։ Այս ուղիով ընթանալը կը յանգեցնէ աշխատատեղերու, համախառն ներքին արդիւնքի եւ միջազգային առեւտուրի կորուստի։

Նախագահ Թրամփ պատրաստակամ է երկկողմմանիլ առեւտուրի ծաւակները 20 միլիառ տոլարէն հասցնելու աւելի քան 75 միլիառ, սակայն այդ կրնայ դժուար ըլլալ, եթէ Միացեալ Նահանգները կիրարկեն CAATSA-ի պատժամիջոցները»։ 14 յունիս 2019-ին Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեւլուտ Զաւուշօղլու սպառնաց, որ Թուրքիա կը հակադարձէ Միացեալ Նահանգներու պատժամիջոցներուն։ «Երկիր մը չի կրնար ցուցմունքներ տալ ուրիշ երկրի մը, թէ ինչպէ՛ս պէտք է վարուի։ Միացեալ Նահանգները պէտք է հրաժարին այս վարքագիծէն։ Բոլորը մտահոգուած են այս առնչութեամբ։ Անկախ որքա՛ն հեռու կրնայ երթալ։ Եթէ Միացեալ Նահանգները քայլերու ձեռնարկեն մեր դէմ, մենք ստիպուած կ'ըլ-

լանք համարժեք քայլերու ձեռնարկելու», յայտարարեց Զաւուշօղլու Էն.Թի.Վի պատկերասփիւռի ալիքին տուած իր հարցազրոյցին ընթացքին։

Որո՞նք են յաջորդ քայլերը։ Էրտողան սորված է նախորդ փորձէն, որ Թրամփ միշտ չէ, որ մտիկ կ'ընէ կառավարութեան կամ Զոնկրեւի անդամներուն։ Էրտողան հեռաձայնային քանի մը զրոյց ունեցած է, որպէսզի համոզէ Թրամփը՝ ստեղծելու համատեղ հետազօտական խումբ, Թուրքիոյ համար ժամանակ շահելու հարցազրոյցին ընթացքին։ Այդ ժամանակամիջոցին, բնականօրէն կամ արհեստականօրէն ստեղծուած համաշխարհային իրադարձութիւնները կրնան փոխել ներկայ իրավիճակը։ Միացեալ Նահանգներու եւ Թուրքիոյ նախագահները կը նախատեսեն հանդիպիլ յունիսի վերըը Թոքիոյի մէջ տեղի ունենալիք «Ճի-20» վեհաժողովին ընթացքին։ Անկաւ կ'ըլլայ Էրտողանի վերջին առիթը՝ համոզելու Թրամփը, որ փոխէ իր որոշումը՝ յուլիսին ռուսական հրթիռներ ձեռք բերելու գծով։

Եթէ Էրտողան չկարենայ փոխել Թրամփի միտքը, ան յառաջ կ'երթայ եւ ձեռք կը բերէ ռուսական հրթիռներ՝ խուսափելու համար Միացեալ Նահանգները կողմէ տուատացումներէ։ Սակայն արիւկա միայն սկիզբ կը դնէ աւելի մեծ հակամարտութեան... Միացեալ Նահանգները պատժամիջոցներ կը կիրարկեն Թուրքիոյ նկատմամբ՝ լրջօրէն վնասելով անոր տնտեսութեան։ Էրտողան կրնայ հակադարձել՝ արգիլելով հնձիրիլքի ռազմականային օգտագործումը Թուրքիոյ մէջ։ Այնուհետեւ Միացեալ Նահանգները պէտք է տեղափոխեն իրեն հալածիչները Յորդաանն (ինչպէս Չերմանիա ըրալ), Յունաստան (ՕԹԱՆ-ի անդամ) կամ Կիպրոս։

Դարուածներու եւ հակահարուածներու այս արատաւոր շրջանը կրնայ աւարտիլ կամ՝ Օ

# ԱՇԽԱՐՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒԽՏԱԽՈՐ՝ ՎԱՂՈՒԱՆ ՀԱՄԱՐ (30 ՄԱՅԻՍ-6 ՅՈՒՆԻՍ 2019)

**դ. ԱՏԱՆԱ, ՄՈՒՍԱ ԼԵՈՒ, ՅԻՇԱՏԱԿԻ ԱՊՐՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱԳՔՖ**  
Ատանս կը հասնինք երեկոյեան: Արդիական հիւրանոցը խնդրած է տեղացիներով եւ օտարականներով: Հոս ալ ուսեստները բազմազան են եւ առատ: Կը շրջիք հիւրանոցին շուրջ եւ կը քալենք բազմադարեան կամուրջի մը վրայ: Հակառակ լայն փողոցներու եւ պողոտաներու՝ խճողումներ կան: Հոս ոչ մէկ անակնկալ կը սպասէ մեզ: Պարզապէս պիտի գիշերենք:

Յաջորդ օր կը մեկնինք Աստիոց, որ աշխարհի ամենէն հին քաղաքներէն մին է եւ եղած է Նաեւ հայոց Տիգրան թագաւորին մայրաքաղաքը: Եղած է քրիստոնէական մեծ կեդրոն: Ալեքսանտրէթի ասնճաքը եւ Աստիոցը Թուրքիոյ կցուած են 1939-ին, որուն պատճառով կրկին տեղի ունեցած է հայերու գաղթը: Չորս տարեկան էի այդ գաղթին: Այդ գաղթին պատճառով ստեղծուած է Լիբանանի այսօրուած ծաղկուն Այնճար գիւղաքաղաքը:

Հանրակառքը կ'անցնի Կիլիկիոյ ճամբաներէն: Ծանօթ անուններ կը կարդանք ուղղութիւն ճշդող ցուցանակներու վրայ. Մերսին, Փայաս, ծննդավայրս՝ Իսկէստերուն, Զորք Խան, Տորթ Եոլ (Չորք Մարգպան)՝ հայրերուս եւ պապերուս խորնշնչիներու պարտեզներով աշխարհը, Սամանտաղ, Սուեդիա...

Հայկական Կիլիկիոյ մէջ էինք, մեր Երկիրը... «Ցանկամ տեսել գիմ Կիլիկիա, աշխարհ, որ ինձ ետուր արեւ»...

Հարազատութիւն կայ օդին մէջ:

Կը հասնինք Աստիոց, նեղ փողոցներով կը յառաջանանք եւ կանգ կ'առնենք մեծ դարպասի մը առջեւ: Հիւրանոցը հաւանօրէն եղած է Նախկին իշեան մը, այդ կ'ըսէ Նաեւ իր անունը, Hotel Savon, հաւանօրէն՝ Խան Սապուն, փողոցին մէջ ալ կան տեղական օճառի վաճառատներ:

Յաջորդ օրը կը մեկնինք դէպի մեր Նորագոյն հերոսապատումի աշխարհներէն Մուսա Լեռ... Կը բարձրանանք լեռնային ճանապարհով, կանաչ պարտեզներ, ձիթենիներ, խարնշնչիներ: ՎազքՖ գիւղաքաղաքի եկեղեցիին առջեւն ենք, ինչ որ տեսած էինք պատկերով: Չկան Մուսա Լեռան գիւղերը, չկան անոց բնակիչները: Բայց մնացած են վերջին մոհիկանները, որոնք մեզ կը դիմաւորեն: Հայրենի աշխարհի հողին կառչած մարդոց հետ այս հանդիպումը ինչպիսի՞ խառն զգացումներու ծնունդ կու տայ... Չեմ մտածեր, կը Նայիմ: Եւ կրկին, յաճախանքի պէս, ինքզինքնս հետ կը խօսիմ. Ինչո՞ւ, ինչպէ՞ս, մինչեւ ե՞րբ...

Եկեղեցիին շրջափակը հազիւ մտած՝ կը տեսնեմ համակրելի երիտասարդ եկեղեցական մը՝ հայր Թաթօլ Անուշեանը, որուն արդէն հանդիպած էի Լոս Անճելըս, Պէրոպ եւ Հայաստան: Եկած էր Պոլսէն: Ան յատուկ արարողութեամբ կ'օրինէ Համահայկական խաղերու ջախի բոցը, որ հայկական դիմադրութեան այս արծուբոյնէն պիտի տարուի Ստեփանակերտ:

Ամբողջ օրը հոն կը մնանք: Հետզհետէ կը բազմանան վազքՖցիները: Կը ճաշենք միասին: Վերակազմուած ընտանիք մը, ուրիշ բացատրութիւն կեղծ պիտի հնչէր:

Ճաշէն ետք կը ցուիինք: Կ'երթանք ինծի միայն անուսով ծանօթ հաղորդակ գիւղը: Այդպէս կը կոչուի Նաեւ Այնճարի թաղամասերէն մէկը: Այնճարի խաղողակցիները յաճախ կը խօսէին իրենց հռչակաւոր հազարամեայ կաղնիին մասին: Անոր շուրջ այսօր զբօսավայրեր կան: Տօնական օր է, եկած են տեղացի դարձած Նոր տէրերը: Եւ ի հարկէ արշաւախումբին անդամները՝ այրեր եւ կիներ, կը լուսանկարուին, կը մտնեն ծառին խորշը, կը բարձրանան անոր ժայռանման կողմ: Կը վերադառնան նք եկեղեցի:



Խաղողրէկ գիւղի հազարամեայ կաղնին

Երեկոյեան պղնձեայ մեծ կաթսաներու մէջ կը պատրաստուի մատաղ: Միջին տարիքի զուարթ արտայայտութեամբ կնոջ մը հետ խօսած էի կեսօրին: Ըսելու համար, որ քիչ մը իրենցմէ եմ, հարցուցած էի, թէ «ո՞ր է պատրում հաց»-ը: Երեկոյեան բոլոր սեղաններու վրայ կը գտնեմ «պատրում հաց»-ը: Միջոցին, տուն գացեր եւ պատրաստեր է... Ծառերով չքացատրուող սրտբացութիւն: Յետոյ պիտի իմանայի, որ ան սգաւոր էր, իր աղջիկը Նոր կորսնցուցեր էր ամուսինը:

Երիտասարդները, Նոյնիսկ եթէ լաւ չէին խօսեր հայերէնը, հայերէն կ'երգէին: Նոյնիսկ ուրիշ քաղաք ուսանելու զացածներ կապաւն կը մնան իրենց հայրենի հողին:

Ընթրիքին եկեղեցիի հաւաքոյթներու սրահը կը թնդայ հայերէն երգերով: Յերեկը երկար է յունիսի առջին օրը: Պատշաճմի վրայ բազուող լայն պատուհանները կը փռուի գեղածիճաղ Կիլիկիան: Խօսակից մը ցոյց կու տայ ձորակի տունները, որոնց հայ բնակիչները մեռած են կամ՝ մեկնած:

Հայաստանէն եկած դասատու կար: Հալէպէն եկած են հոն բնակութիւն հաստատած երիտասարդ կար:

Ուշ առտն, երբ Աստիոցի հիւրանոցը վերադարձանք, փորձեցի տպաւորութիւններս արձանագրել: Անկարելի եղաւ: Չգացումներս կը պղտորէին, եւ գիրար կը իրմշտկէին պատկերներ: Հիմա ալ պատկերները իրարու չեն յաջորդեր, միագիծ չեն: Խանգարուած է յիշողութեան ճօճանակը:

## Ե. ԶԱԳԻ ԲՈՅՑ՝ ՄԱՐՏՆՉՈՂՆԵՐՈՒ ԼԵՈՒՆԵՍ

Արշաւախումբէն հինգ հոգի պիտի բարձրանայ Մուսա Լեռան գագաթը, հոն, ուր ապաստանած եւ ինքնապաշտպանութեան կրօն մղած էին մուսալեռացիները: Պատմութիւնը ծանօթ է: Կրկին կարդալ Ֆրանց Վերթէի «Մուսա Լեռան քառասուն օրերը», որ թարգմանած է Նաեւ օտար լեզուներու (Les quarante jours de Musa Daghi, Franz Werfel): Հանրակառքը (autobus) բոլորս կը տանի կրկին ՎազքՖ, Թորոսի սրճարան-ճաշարանը, ուրկէ լեռնագագաթները պիտի երթան Մուսա Լեռ: Բեռնատար մը գիրենք կը սպասեր, Թորոսը եւ իր որդին զանոնք պիտի առաջնորդէին:

Ժամ մը մնացինք Թորոսի խարնշնչիներով, ձիթենիներով, սալոբենիներով եւ այլ պտղատու ծառերով շրջապատուած սրճարանը:։

Խումբէն մաս մը, առաւօտ կանուխ արդէն մեկնած էր Այնթապ, իսկ մնացողներս գացինք ծովափ, ուր լողաւազան կար: Այրող արեւ կար:

Եթէ տեսալ մը ուխտաւոր եղած ջուլայինք, ծովափը, ուր գացինք սպասելու լեռնագագաթներուն վերադարձը, լողաւազանը, հոն եկած տեղացիները եւ զբօսաշրջիկները, ջուր ճողբացնողները, գարեջուր խմողները, մերկացած այրերը եւ կիները պարզապէս պիտի յիշեցնէին Լիբանանի, Ֆրանսայի, Յունաստանի ծովափը, յոգնելով՝ զուարճացողները:

Այդ ծովափին եթէ հետեւէինք, թերեւ Նոյնիսկ՝ քալելով, կը հասնէինք Զեսապ, Գարատուրանի ծովափը: Այդ Նոյն ծովափին կը գտնուէին ծննդավայրս եւ հայրերուս ու Նախահայրերուս քաղաքը: Ինչպէ՞ս կարելի է, զգացումներէն անդին, չմտածել քաղաքականութեան եւ իրաւունքի մասին: Կը տարուիմ միտքերով:

Բեմերէն, մեծ ատենաներէն կը գոռան արդարութեան եւ իրաւունքի մասին. Etat de droit, droits de l'homme, human rights, խաղաղութիւն, միջազգային ատենաներ: Այս մոլորակի վրայ ապրող բնակիչ, որուն համար կ'ըսուի, որ երաշխաւորուած հաւասար իրաւունքներ ունի բոլորին հետ, բոլորին պէս, ամանք բառերու ետին թաքնուելու, կ'ուզեմ գիտնալ, թէ ո՞ր են իմ իրաւունքներս, ոչ թէ՝ մեր ժողովուրդի անդամներուն այսօր որպէս շնորհ շալկած զանազան քաղաքացիութիւններու ապահովութիւնները, այլ հայ մարդու իրաւունքներս: Ամերիկացիի, Ֆրանսացիի, արժանթինցիի, աւստրալիացիի իրաւունքներ ունինք, բայց մեզմէ խլուած են մեր իսկական իրաւունքները: Յաճախ կը յիշեմ յոյն գրողին խօսքը, որ իրմէ խլած են իր հայրերու կողքին թաղուելու իրաւունքը:Յոյն գրողը՝ Տիմիթրիոս Վիքելաս, «Լուքիս Լարաս» 1988-ին լոյս տեսած վեպին մէջ գրած է.

«Այս մատրան մէջ ամուսնացած են ծնողքս, անոնց բաղձանքն էր հոն թաղուիլ, իրարու կողքին, եկեղեցիի Նախամուտի սալաքարերուն տակ: Բայց ո՞չ ծնողներս հոն գտան իրենց հանգիստը, ո՞չ ալ իմ ոսկորներս պիտի կարենան փռել ըլլալ հայրենիքիս այդ սիրելի անկիւնը: Այսօր կ'ապրինք եւ պիտի մեռնինք մէկս հոս, միւսը անդին, կենացի մէջ թափառողներ, պջտրուած մահուան մէջ, սփիւռքի փոթորիկը ցնցած եւ ջարդած է սրբազան կապերը, որոնք կը միացնէին զաւակներու սրտերը Նախնիներու հողին»:

Այսօր փոքրացած հայրենիքէն դուրս ապրող հայ ժողովուրդը, ստուար մեծամասնութիւնը ազգին, եթէ պահ մը դուրս գայ սպառողական ընկերութեան, ընչաքաղցութեան եւ բարօրութեան իր հետապնդումէն, եւ բառ առ բառ կարդայ Տիմիթրիոս Վիքելասի խօսքերը, մեզի գիտնութիւն առթող հինգ միլիոն հայու տեսական համրանքի ապագան տարբեր կ'ըլլայ:



Հերոսներու քանդուած շիրիմներ

Երեկոյեան կրկին գացինք ՎազքՖ՝ լեռնագագաթներուն հետ հիւրանոց վերադառնալու համար:

Լեռնագագաթները բեռնատարով լեռան ստորոտը հասած են, ուրկէ սկսած է մազցումը: Զարքարուտ կաճաններով բարձրացած են հոնկէ վառելու համար ջահը: Հակառակ դժուարութեան եւ յոգնութեան՝ հասած են գագաթ: Դիմադրական քառասուն օրերու կրկներու ընթացքին մեռածներու եւ զոհերու գերեզմանները քանդուած գտած են: Չիւսադարձն ետք վերադարձողները լեռան վրայ քարերով կանգնած են գիրենք փրկած «Կիշեն» Նաւուն կոթողը: Այդ կոթողն այ գտած են ականահարուած, մնացած է միայն ցուկը:

Բերին բոցը: Նկարահանած են լեռը:

ՎազքՖի փողրիկ գերեզմանատան մէջ դամբաններ կան: Հայերէն անուններ, հայու թրքացուած անուններ: Թրքատառ անուններ:

Կրկին կ'արձագանգէ մազոխականի հոգեմաշ մտալլկող հարցուիմ. ինչո՞ւ, ինչպէ՞ս, մինչեւ ե՞րբ...

## Գ. ՄԻՍ, ԼԵՈՒՆԻ ԲԵՐԴ, ՍՈՒԼՈՒՄԻ ԿԱՍՈՐՏ

Կիլիկիա կրկին: Հայրենիք, ուր հայկական այրուձին պետութիւն ստեղծած էր, ապրած են իշխած էին թագաւորներ՝ Ռուբէն, Հեթում եւ Լեւոններ, կաթողիկոսներ, Լեւոն Շնորհալի բանաստեղծ-կաթողիկոս եւ շնորհալի մանրանկարիչ Թորոս Ռալիլ:

Ծաղր է: Միւր կոչած են Զոզան, Լեւոն Բ. արքայի բերդը՝ Ելլան գալէ, Օձի բերդ:



Լեւոնի Բերդը

Ի զուր չէ, որ կը գործածեմ մազոխական բառը, քանի այս բոլորը տեսնել, լսել եւ արձանագրել գիտակցի եւ պագիտակցի խորշերուն մէջ, առանց տարուելու այ-ֆոնի խաղով, անստիճածի եւ անզօրութեան զգացումով հոգիները կը ճմլէ:

Ատանայէն կը հասնինք Սիս՝ թագաւորանիստ եւ կաթողիկոսանիստ հայկական մայրաքաղաքը: Զաղաքի կեդրոնէն բերդի ստորոտը կը բարձրանանք փոքրիկ ինքնաշարժներով: Հոս ալ կան տեղացի եւ օտար զբօսաշրջիկներ: Մենք ալ հոն էինք, յիշատակներու որսորդ զբօսաշրջիկ՝ մեր հողին վրայ:

Զարքարուտ ճամբով կը բարձրանամ մինչեւ ամրոցի դարպաքը: Ապա կը վերադառնամ պարիսպի ստորոտը, կը դիտեմ պարիսպները, հաստ քարերը, հայ շինարարի աշխատանքի վկայութիւն: Թերեւս հոն կայ Նախապապերու քրտիկը: Մլեհի մայրաքաղաքը: Առեւանգուած, իւրացուած:



Կը բարձրանանք Սիսի բերդը

Մեզ ամրոց փոխադրած թուրք վարորդին հետ կը գրուցեմ մեծ մօրմէ սորված կաղ թրքերէնով: Վստահութեան հաստատումէ ետք կը հարցնեմ, թէ քաղաքին մէջ հայեր կա՞ն: Կ'ըսէ, որ չկան, բայց գիւղ մը կայ, որուն բնակիչներուն եօթանասուն առ հարիւրը հայեր են: Հոն պիտի չերթանք: Անոնք հայ պիտի չտեսնեն: Նոյնիսկ եթէ ընտանեկան յիշատակներ պահեն, դատապարտուած են դանդաղ կամ արագ անհետացման: Կա՞ր փրկութեան լաստ: Մնացած են հողին վրայ: Թերեւս տըր են իրենց տան կամ այգիին: Յետո՞ւ...

Կը խմբուինք եւ կ'երթանք դէպի Լեւոն արքայի բերդը: Նոյն լըուած պարիսպները: Պատմութիւնը կանգ առած է: Անոր Նոր տերերուն համար բերդը սոսկ կոթող է, իրենց պատմութիւնը չէ, իսկ մեզմէ խլուած է տեր ըլլալու իրաւունքը: Մնացած է Նկարելու, գիրք գրելու եւ յիշատակ պահելու միսիթարութիւն՝ լուսանկարելու եւ անցնելու իրաւունքը: ՎազքՖ, Տորթ Եոլ, Ատանա, Սիս... մէկ ափի մէջ՝ աշխարհ մը: Նոյնիսկ եթէ կան իրենց պապեանկան հողին եւ այգիին կառչածներ, ի՞նչ է վաղուան խոստումը: Ըլլալ բնակիչ եւ վերջին մոհիկան՝ Ռոպենտինի կղզիին վրայ: Իսկ զբօսաշրջիկը ինչպէ՞ս հայրենատեր ըլլայ: Ժամանակացոյցին վրայ չկան ո՞չ հոմովկան, ո՞չ ալ Սասունը...

Իսկ եթէ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսը յաջողի օրէնքի ուժով շրջել պատմութեան անիւը եւ վերափոխաւալ իր Սոյո կաթողիկոսի իրաւունքներուն, այդ կ'ըլլայ անկիւնադարձ՝ մեր լիւեւութեան ճանապարհին:

Ֆրանսացիին կ'ըսէ. ով որ ոչինչ կը փորձէ ոչինչ կ'ունենայ. qui ne tente rien, n'a rien...

Ճանապարհը կը շարունակուի: Կը հասնինք հայ ազատագրական պայքարի խորհրդանշական թատերաբեմ Արածանիի վրայ ձգուած Սուլուխի կամուրջը:



Սուլուխի կամուրջին վրայ

Արածանի... բառ էր կամ քարտէսի վրայ՝ գիծ մը, ան մեր աչքին առջեւ փռուող հայրենի կենսատու գետ է:

Ժամանակակից պատերազմներուն բաղդատած՝ պարզ միջադէպ մըն է Սուլուխի կռիւը, որուն ընթացքին կը Նահատակուի պայծառ դէմքով Գեորգ Զաւուշը՝ Տարօն աշխարհի առասպելական հերոսը: Հոս քար, ջուր, տարածութիւն՝ պատմութիւն են: Երեւանէ դուրս հազիւ ելած՝ կը հանդիպինք «Գեորգ Զաւուշ»-ի թաղի ցուցանակին եւ կ'անցնինք: Հոս երկինքը տակ պատմութիւն կայ:

Այս կամուրջը հաւասօրէն ներծծած է Գեորգի եւ իր զինակիցներուն հեղուած արիւնը: Անոնք իրենց աչքերը փակած էին՝ լսելով հայրենի Արածանիի ջուրերուն կարկաչը: Այսօր կամուրջ եւ Արածանի պիտի արձանագրուին ուխտաւոր զբօսաշրջիկներու այ-ֆոններուն մէջ, ցոյց պիտի տրուին՝ ընկեր բարեկամի, զաւակի եւ թոռներու:

Կը մտածեմ. ինքնութեան եւ անոր պատուանդան հողի համար հայ մարդիկ կենաց գոհած էին:

Պատմութիւնը կը վերագտնե՞ իր բնական հունը: Յափշտակող եւ առեւանգող հոգեփոխութիւն կ'ունենա՞ն, որպէսզի մարդը չըլլայ մարդու գայլը... homo homini lupus: Յիշել Յոպզը...

Ուխտաւոր զբօսաշրջիկները Արածանիի վետվետացող ջուրերուն մէջ կարմիր վարդեր կը թափեն, որոնք կը ծփան եւ կ'երթան Գեորգ Զաւուշին յուշելու, որ եկած էինք, որ իր հետապնդած իրաւունքի դատը չէ մոռցուած: Ան պիտի ըսէ՝ ինչպէ՞ս շարունակել:

Ի՞նչ բանի խորհրդանշիչ է Սուլուխի կամուրջը տասը միլիոն հայերուն համար: Անպափկանկարու հարցումը. համաշխարհային դարձած ազգի ո՞ր տոկոսը գիտէ, որ հոս հեղուած է հայ հերոսին արիւնը, որպէսզի մենք չըլլանք սոսկ անցեալ:

Արածանիի տարած կամրիկ վարդերը ծես էին:

Ի՞նչ կը սպասէ եւ կ'ընէ հայը ծեսէն անդին, Հայաստաններ եւ սփիւռքներ...

## Յ. ՊԱՆԵԱՆ

(Շար. 2)

## ՏՕՆ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ

Անցնող շաբաթ Յայ եկեղեցին յիշատակեց շարք մը կարեւոր սուրբերու տօները՝ Ռօմիսիմեանց եւ Գայեանեանց կոյսերու տօնը, Յովհաննու Կարապետի տօնը: Այս շաբաթ Յայ եկեղեցին կը յիշատակէ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի հոր Վիրապէն ելքի տօնը, ինչպէս նաեւ՝ տօնը Կաթողիկէ եկեղեցւոյ Սուրբ Էջմիածնի:

Ս. Գրիգոր Լուսաւորիչը 13-15 տարիներ շարունակ բանտարկուած էր հոր Վիրապի մէջ: Անտղութեան համաձայն, Ռօմիսիմեանց կոյսերը սպանելու հրամանը տալէն ետք, Տրդատ թագաւորը կը բռնուի անբուժելի հիւանդութեամբ: Անոր քոյրը՝ Խոսրովիդուխտը, որ հաւատացեալ էր եւ գիտեր, թէ Գրիգոր ողջ է, երազին միջոցաւ հոր Վիրապէն դուրս հանել կու տայ Գրիգորը, որ, իր կարգին, աղօթելով կը բժշէ Տրդատ թագաւորը:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ 13-15 տարիներ շարունակ հոր Վիրապին մէջ մնալէ ետք, երբ դուրս կու գայ բժշկելու Տրդատ թագաւորը, տեսիլք մը կը տեսնէ, որուն համաձայն, Քրիստոս, ողորուած հրաշափառ լոյսով եւ շրջապատուած երկնային զօրքերով, երկինքէն կ'իջնէ Վաղարշապատ քաղաքին կեդրոնը եւ ոսկիէ մուրճով կը քանդէ այդտեղ գտնուող հեթանոսական մեհեանը, որմէ ետք ամպերու ընդմէջէն լուսեղէն տաճար մը կ'ուրուագծուի, որուն վրայ կ'երեւին Փրկիչին խաչը եւ երեք հսկայ սիւներ, ուր նահատակուեցան Ս. Գայեանէն, Ս. Ռօմիսիմէն՝ իրենց ընկերակիցներով եւ հնձանը: Այս մէկը կը նշանակէ հեթանոսութեան վերջնական բնաջնջումը հայ ազգին մէջէն եւ Յայ առաքելական եկեղեցւոյ հաստատումը ուղղակի Քրիստոսի միջոցաւ: Այս տեսիլքէն ետք Ս. Գրիգոր քարոզչէ պարիսպներով շրջապատել կու տայ յիշեալ վայրը եւ անմիջապէս կոյսերուն նուիրուած եկեղեցիներ կը կառուցէ, որոնց մէջ կը գտնուէ նահատակ սրբուհիներուն աճիւնները: Առաջինը կը կոչուի Ս. Ռօմիսիմէի անուանով, որուն մէջ կը գտնուին սրբուհիին աճիւնները, երկրորդը՝ Ս. Գայեանէ, իսկ երրորդը՝ Ս. Մարիանէ, որ հիւանդ կոյս մըն էր, որ չէր կարողացած փախչիլ միւսներուն հետ:

\*\*\*

Յիշեալ եղելութիւններէն ետք Ս. Լուսաւորիչ, պետական աւագանիին նախաձեռնութեամբ, կը մեկնի Կեսարիա, ուր իր քրիստոնէական կրթութիւնը ստացած էր եւ կը ստանայ իր քահանայական ձեռնադրութիւնը՝ դառնալով հայոց կաթողիկոսը: Իր Վերադարձին ան քրիստոնէայ կը մկրտէ Տրդատ թագաւորը, Աշխէն թագուհին, թագաւորին քոյրը՝ Խոսրովիդուխտը: Ապա Վաղարշապատի մէջ կը սկսի մայր տաճարին շինութեան աշխատանքները: Առաջին հերթին ան քանդեց բոլոր այն մեհեանները, որոնք կը գտնուէին այնտեղ, որմէ ետք միայն կը սրբագործէ տեսիլքին երեւման վայրը եւ քանի մը ամիսներու ընթացքին կը կառուցուի մայր տաճարը: Ան կ'օծուի 303 թուականին, Ս. Աստուածածնայ տօնին, եւ այդ իոնկէ ալ առած է իր անունը, որ հետագային փոխուելով՝ կը վերանուանուի Ս. Էջմիածին անունով, որ կը նշանակէ Միածինի իջած տեղը: Սակայն մայր տաճարը կանգուն վիճակի մէջ չէ մնացած այնուհետեւ. 380 թուականին Մերուսին Արծրունիին պարսկական զօրքով մտնելով Յայաստան՝ կ'աւերէ զայն: Մայր տաճարին աւերումէն մօտաւորապէս 100 տարի ետք Վահան Մամիկոնեանը կը վերանորոգէ զայն: Այս դէպքէն ետք քանի՜ցս աւերուած ու վերանորոգուած կամ վերակառուցուած է Ս. Էջմիածին մայր տաճարը:

Անէի ուշ Կոմիտաս կաթողիկոսը (615-628) կ'որոշէ փառաւոր տաճար մը կառուցել՝ Ռօմիսիմեանց կոյսերուն նուիրուած: Վերաշինութեան աշխատանքներու ժամա-

նակ ի յայտ կու գան Ս. Ռօմիսիմէի եւ անոր նահատակակից ընկերուհիներուն աճիւնները, որոնք Ս. Գրիգորը գետնուած էր տապաններու մէջ: Տապանները կը կրէին Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ Ս. Սահակ Պարթեւ հայրապետներուն կնիքները: Կոմիտաս կաթողիկոս ի՞նք եւս կնքելով տապանները՝ զանոնք կը գետնուէ Նորակառուց եկեղեցիին ներքնայարկը: Այս առիթով Կոմիտաս կաթողիկոս կը գրէ նշանաւոր «Անձինք Նուիրեալք» կոյսերուն նուիրուած շարականի կանոնը: Նոյն դարուն Եզր Կաթողիկոսը եւս (630-641) կ'որոշէ վերակառուցել Ս. Գայեանէի վկայարանը: Ան գեղեցիկ ճարտարապետութեամբ կ'օծուէ եկեղեցին եւ նոյնպէս սրբուհիին եւ անոր նահատակակիցներուն նշխարները կ'ամփոփէ այդտեղ:

17-րդ դարուն Յայաստան կու գան ֆրանսացի լատին կրօնաւորներ՝ գողնալու եւ Եւրոպա փոխադրելու հայ սուրբերու մատուցներն ու աճիւնները, որոնց կարգին էին Ռօմիսիմեանց եւ Գայեանեանց կոյսերունը: Դեպքը տեղի կ'ունենայ Դակիթ Վաղարշապատեցի եւ Մելիքսեդէկ աթոռակից կաթողիկոսներու օրերուն (1590-1629): Այդ գողերը կը ձերբակալուին պարսկական իշխանութիւններու հետապնդումով: Պարսիկ իշխանաւորները գողներէ վերադարձուած մատուցներուն մէկ մասը իրենք կը գողնան եւ կու տան Շահ Աբասին: Յետագային, լատին հոգեւորական մը, Շահ Աբասէն ստանալով կոյսերու աճիւններէն մատուցները, կը տանի Յնդկաստանի Կուա (Goa) քաղաքը եւ կը գետնուէ Նորակառուց եկեղեցւոյ հիմքերուն մէջ:

Փիլիպպոս Աղբակեցի կաթողիկոսի (1633-1655) եւ տեղապահ Յակոբ Ջուղայեցիի (ապա կաթողիկոս) օրով վերատեսութեան կ'ենթարկուի Ս. Ռօմիսիմէի, Ս. Գայեանէի եւ այլ տապաններու ամբողջական գոյութիւնը: Նոյն ժամանակներուն Ս. Ռօմիսիմէի տաճարի վերանորոգման պահուն կը հաստատուի, որ լատին գող կրօնաւորները աճապարելու պատճառով, իրար անցած, շփոթած էին Ս. Ռօմիսիմէի, անոր ընկերուհիներուն եւ բարեկրօն հոգեւորականներու աճիւնները: Կոյսերուն աճիւնները իրենց տեղն էին: Յիշեմք, որ 16 ապրիլ 1979-ին, տեղի կ'ունենայ կոյսերու տապաններուն վերջին ստուգումը՝ Վազգէն Ա. կաթողիկոսին կողմէ:

Այս առիթով պետք է յիշել նաեւ, որ սրբուհիներուն եւ անոնց ընկերակիցներուն թիւը եղած է 70: Անոնք բաղկացած են 37 կոյսերէ, 7 քահանայներէ եւ 26 հաւատացեալներէ: Նահատակուած են 37 կոյսեր:Անոնց նահատակութիւնը տեղի ունեցած է 5-6 հոկտեմբեր 300 թուականին:

Ս. Էջմիածնի մայր տաճարը հայութեան համար է ու կը մնայ սրբութիւն սրբոց: Ան եղաւ հայութեան հոգեւոր զարթոնքի օրրանը՝ իր պատմական անկիւնադարձային նշանակութեամբ, իր պատմականութեամբ ու ազգային պատկանելիութեան գիտակցութեամբ:

Թող ամենագոր Տերը պահէ ու պահպանէ Յայ եկեղեցին, անպակաս ընէ Իր իովանին անոր վրայէն, հզօրացնէ ու ամրացնէ զայն, ուժ ու կորով պարգեւէ Յայ եկեղեցւոյ բոլոր պաասաւորներուն, որպէսզի այսօրուան աշխարհին մարտահրաւերներուն դիմաց եկեղեցին՝ որպէս Քրիստոսի խորհրդական մարմինը, կարողանայ դիմագրաւել ու դիմակայել ամէն տեսակի դժուարութիւն ու խոչընդոտ, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի փառքին համար, որուն կը վայելէ փառքը, իշխանութիւնը եւ պատիւը յաւիտեանս յաւիտեանց:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն  
ՅՈՎԱԿԻՄ ԱՐԷ. ԲԱՆԺԱՐԾԵԱՆ

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԴՐԱՂԱՐԶ

## ԻՏԼԻՊԻ ՇՈՒՐՋ ՍՈՉԻԻ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ ՓՈՒԼ ԿՈՒ ԳԱՅ

Լարուածութեան մեղմացման գօտին, որուն շուրջ համաձայնութիւն գոյացած էր Սոչիի մէջ՝ Ռուսիոյ եւ Թուրքիոյ միջեւ, ներկայիս փուլ կու գայ. սուրիական բանակը, կառավարական ուժերը եւ ռուսական օդուքը կը ռմբակոծեն թրքամետ զինեալներուն կեդրոնները Իտլիպի մէջ: Այս բոլորը կ'ապացուցեն, որ այդ համաձայնութիւնը այլեւս չէ, իսկ գետնին վրայ հաւասարակշռութիւնը ի նպաստ սուրիական պետութեան է:

Սոչիի համաձայնագիրը ցնցուեցաւ, երբ 22 ապրիլ 2019-ին Աթթանայի մէջ ռուսական, իրանական եւ թրքական կողմերը ծախողեցան միացեալ տեսլականով դուրս գալ Սուրիոյ Սահմանադրական խորհուրդին շուրջ: Այս երեք երկիրները ուզեցին վերամշակել Սուրիոյ սահմանադրութիւնը: Անէին. Նոյն ամսուան ընթացքին Իտլիպէն եկած ժապիաթ Նուրայիի ահաբեկիչները սպաննեցին 22 սուրիացի բանակայիններ, բան մը, որ զայրացցուց ռուսական կողմը: Անոր զուգահեռ, Լաթաքիոյ մէջ ռուսական ռազմական կետրուները ռմբակոծուեցան ընդդիմադիր զինեալ խմբաւորումներու կողմէ: Ռուսիոյ համար Թուրքիան իր «պահակ»-ի պարտականութիւնը չէր կատարեր:

Թուրքիոյ կողմէ ռուսական այս քայլը կ'որակուի իբրեւ «քաղաքական դաւաճանութիւն», որովհետեւ, ըստ համաձայնագիրին, Ռուսիա կը խոստանար արգիլել սուրիական բանակին կողքին: Անէին. Մայիս 2019-ին Թալ Ռիֆաթի մէջ քրտական զինեալ խմբաւորումներու կողմէ սպաննուեցաւ թուրք զինուոր մը, եւ Թուրքիա ամբաստանեց համաձայնագիրի կողմերը, որ կարելի եղածին չափ չեն խոչընդոտեր քիւրտ զինեալներուն յարձակումները: Թուրքիոյ համար Թալ Ռիֆաթը ռազմավարական կարեւորութիւն ունի, որովհետեւ միջազգային առեւտուրի ճամբան կը բանայ Ալնթափի եւ Յալէպի միջեւ:

Սակայն Ռուսիա նաեւ մտաւոգ է, որ այսպիսի արարքեր կրնան մղել Թուրքիան դէպի Միացեալ Նահանգներ,



եւ հիւսիսային Սուրիոյ մէջ փուլ գալ լարուածութեան մեղմացման գօտին եւ կայունութիւնը: Սոչիի համաձայնագիրը միակ յոյսն է, որ փրկէ Ռուսիոյ քաղաքական հսկողութիւնը Սուրիոյ մէջ. եթէ Թուրքիան քաշուի համաձայնութիւնէն, ապա ամերիկեան քաղաքականութիւնը պիտի հզօրանայ Սուրիոյ մէջ եւ դարձեալ վտանգէ ռուսական շահերը:

Ռուսիոյ շահերէն կը բխի երաշխաւորել Յմէյմիմ օդակայանի ապահովութիւնը եւ միացնել Լաթաքիոյ տարածքը սուրիական պետական վերահսկողութեան, որովհետեւ այս նպատակը տնտեսական եւ առեւտրական պատճառներ ունի:

Միւս կողմէ՝ թրքամետ զինեալ խմբաւորումները հսկայ դիմադրութիւն ցոյց տուին սուրիական բանակին դէմ: Անգարայի պատգամը յստակ է Ռուսիոյ. եթէ պատերազմը պիտի վերսկսի, ապա դիմադրութիւնը պիտի շարունակի, եւ երկու կողմերը կրրուստներ պիտի ունենան: Իսկ Սոչիի համաձայնագիրին փլուզումով Ռուսիա ինքզինք պիտի գտնէ միևնա՛յ սուրիական արհմալի դաշտին մէջ:

ԵՐԻՍ ԹԱՇԵԱՆ  
Yeghia.tash@gmail.com

### ՀԱՄԱԶԱՅԻՆ Մ. ԵՒ Հ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԴԵՄԱՐԱՆ

## ՆՈՐՍԻԿԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷՁԻ ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԷՍ



Ուրբաթ, 14 յունիս 2019-ին, երեկոյեան ժամը 7:00-ին Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարանի «Տոքթ. Ատրիւն Գարազաշեան» սրահին մէջ տեղի ունեցաւ ՀՕՄ-ի Նորսիկեան մանկապարտեզի ամաւերջի հանդէսը՝ ներկայութեամբ ճեմարանի անձնակազմին, Համազգայինի Կեդրոնական վարչութեան, ճեմարանի խնամակալութեան, ծնողներու, բարեկամներու եւ շրջանաւարտներու:

Բացման խօսքով հանդէս եկաւ մանկա-

եւ վերվերիի մասին, որմէ ետք երգեցին Հայաստանի երգը եւ պարեցին դափաման, ապա անոնք իջան բեմէն եւ հայկական գոգնոցները տուին իրենց ծնողներուն, որպէսզի իւրաքանչիւր ընտանիք ունենայ զայն իբրեւ յիշատակ:

Ամբողջ հանդէսի տեւողութեան ուշագրաւ էին բեմին ետին պատամադի վրայ ցուցադրուած նկարները՝ իւրաքանչիւր պարի կամ երեխաներուն առօրեային առնչուող:

Գեղարուեստական յայտագրին աւար-



պարտիզպանուհի Թալին Եանիյեանը, որ ողջունեց ներկաները եւ ըսաւ, որ շատ արագ անցան մանկապարտեզի երեք տարիները, որոնց ընթացքին փոքրիկները զարգացուցին զանազան կարողութիւններ, ունեցան ընկերային կեանք եւ կերտեցին իրենց ազգային նկարագիրը: Ան իր խօսքը ուղղեց աշակերտներուն եւ ըսաւ. «Սիրելի՛ երեխաներ, պիտի ըլլաք ուսուցիչներ, երկրապիներ, բժիշկներ, իրշէներ, դէկավարներ, ազգային գործիչներ... քիչ ետք բեմէն պիտի յայտարարէք այս բոլորը ինքնավստահ ու բարձրաձայն, եւ վստահ ենք, որ պիտի տարածէք հայ լեզուն ու մշակոյթը, ո՛ր որ ըլլաք»: Ապա Եանիյեան շեշտեց, որ առանց ծնողներուն՝ հայ մանկապարտեզը չի յաջողիր իր առաքելութեան մէջ: Ան շնորհակալութիւն յայտնեց մանկապարտեզի անձնակազմին եւ դաստիարակներուն, որոնք գուրգուրանքով եւ նուիրումով հետեւեցան երեխաներուն աճին, ինչպէս նաեւ՝ ծնողներուն, որոնք համագործակցեցան եւ իրենց զաւակները վստահեցան մանկապարտեզին: Մանկապարտեզի պատկանող շնորհակալութիւն յայտնեց նաեւ նկարչութեան ու սուցիչ Գրիգոր Արքաճեանին՝ բեմայարդարումին համար:

Այս տարուան հանդէսին բնաբանն էր պարը: Փոքրիկները ներկայացուցին զանազան պարեր: Այսպէս, անոնք պարեցին՝ սամպա, ռումպա, չաչաչա, ռոք էստ ռոլ, թուիսթ, ֆլամինկո, թանկո եւ տիւքո:

Պարերէն անմիջապէս ետք ելոյթ ունեցաւ աշակերտական նուագախումբը՝ զանազան նուագարաններով, որմէ ետք ցուցադրուեցաւ երեխաներուն կողմէն պատրաստուած տեսերիզ մը, ուր իւրաքանչիւր երեխայ ներկայացուց, թէ ի՞նչ է պարը:

Տեսերիզէն ետք ներկայացուեցաւ հայկական պարը: Փոքրիկները յաջորդաբար խօսեցան Եարխաւշտայի, քոչարիի, լորկէի

տին երեխաները բեմ հրաւիրեցին ճեմարանի տնօրէն Փաուլա Եղիայեանը՝ արտասանելու համար իր սրտի խօսքը: Ան շնորհաւորեց փոքրիկները, որոնք յաջողեցան հանդէսին ներկաները փոխադրել դէպի ուրախ, խանդավառ եւ գունաւոր աշխարհ մը: Շնորհաւորանքի արժանացան նաեւ երեխաներուն ծնողները՝ վկայականներուն առիթով: Փաուլա Եղիայեան յոյս յայտնեց, որ 12 տարիներ ետք անոնց զաւակները դարձեալ միասին բեմ բարձրասան ստանալու համար ճեմարանի աւարտական վկայականը: Եզրափակելով իր խօսքը՝ տնօրէնուհին շնորհաւորեց մանկապարտեզի անձնակազմը եւ ճեմարանի մեծ ընտանիքը, որոնք իրականացուցին այդ օրուան գեղեցիկ հանդէսը:

Հանդէսին աւարտին Կանաչ դասարանի աշակերտները ստացան իրենց վկայականները:

Վկայական ստացան հետեւեալ աշակերտները.

Արքարեան Լեւոն, Արքահամեան Կալի, Արքահամեան Արէն, Աղասարգիսեան Միքայէլ, Անտոնեան Լոռի, Գայապալեան Սերժիօ, Գապաքեան Ալիք, Դարբինեան Նարէկ, Էլ Նաշեֆ Գարիկ, Թահմիզեան Կերի, Ժազմագեան Մարիլին, Լօշիաճեան Յակոբ, Ըրէրճեան Սոֆի, Մարատեան Մերլի-Ժյուլիա, Մարթայեան Նանար, Նեմշեհրիեան Ալեք, Ծազըլեան Նարէկ-Կերի, Չափարեան Լայէ, Չիֆճեան Ռուբէն, Պալթաճեան Լիլա, Պետրոսեան Միքայէլ, Պոյաճեան Զամի, Սէլիսեան Ռաֆայէլ, Տեմիրճեան Վայք, Տեմիրճեան Հրակ, Տեր Մարթսեան Ժաք, Տիշչէքէլեան Սոֆի, Բեպապճեան Արթիւր, Քիւրճեան Նանէ, Զուստօղլի Լոռի:

Նորսիկեան մանկապարտեզէն վկայեալ աշակերտները հանդէսը փակեցին ճեմարանի քայլերգով:

## ԱՆԿՐԱԴԱՐՁ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ. 100-ԱՄԵԱԿ. ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ԵՒ ԹԵԹԵՒ ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ- Ա.

Հայաստանի Հանրապետության Գիւղատնտեսութեան եւ պետական գոյքերի գլխաւոր վարչութիւնը Նախարարութեան կարգավիճակ ստացաւ 10 օգոստոս 1919-ի Ալեքսանդր Խատիսեանի կառավարութեան մէջ, եւ Աւետիք Սահակեան ստանձնեց Նախարարութիւնը, խնամատարութեան Նախարարութեան կողքին: Ապրիլ 1920-էն մինչեւ 24 նոյեմբեր 1920 անոր յաջորդեց Սիմոն Կրացեանը, որ արդէն երկրագործութիւն ուսանած էր (1):

Այս ժամանակամիջոցին, Նախարարութիւնը 1920-ին (օր եւ ամիս չէ նշուած՝) հրատարակեց «Գիւղատնտեսական հանդէս»-ի միակ համար 1-ը (2), որուն խմբագրականէն կը մէջբերեմ. «...հայ ժողովուրդին ու անոր նորակազմ պետական կեանքի փրկութեան միակ գրաւականները անոր տնտեսական ու գիւղատնտեսական կեանքի բարձրացման ու բարգաւաճման եւ գիւղատնտեսական արդիւնաբերութեան զարգացման զարկ տալու մէջ կը կայանայ: Մեր Նպատակն է նուիրուիլ մեր երկրի տնտեսական եւ գիւղատնտեսական բովանդակ կեանքի գիտական ուսումնասիրութեան եւ հետազոտութեան՝ իր բոլոր ճիւղաւորումներով եւ բնագաւառներով...» (3):

|                                                                                                             |                       |    |
|-------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------|----|
| № 1                                                                                                         | ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆԴԻՍ | 97 |
| <b>ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ</b>                                                                                       |                       |    |
| <i>Խմբագրութեան կողմից</i>                                                                                  |                       | 8  |
| <i>Գիւղատնտեսական հանդէս</i> —ի հերթ. ծրագր. Ստ. Կամսարական                                                 |                       | 8  |
| <i>Բաժնի բոյսեր.</i> —Գիւղ. Մ. Բումանեան                                                                    |                       | 19 |
| <i>Պատու թիւեր և Ստատիստիկան.</i> —Բ. Իսխանեան                                                              |                       | 31 |
| <i>Հայաստանի տնտեսութեան դրութիւնից.</i> —Միլ. Աղիւն                                                        |                       | 40 |
| <i>Գիւղատնտեսութեան զարգացման պայմանները</i>                                                                |                       |    |
| <i>Հայաստանում.</i> —Խ. Սամուկեան                                                                           |                       | 47 |
| <i>Բամբակի մշակութիւնը և պտուի թեւեր</i>                                                                    |                       |    |
| <i>ձեռնարկ. միջոցները.</i> —Գիւղ. Կ. Մ. Շաննազարեան                                                         |                       | 53 |
| <i>Հայաստ. Հանրապ. մէջ անասուն. վարակիչ հիւանդ. դէմ մարտող կայան հիմնելու մասին.</i> —Անսանթրով Վ. Բոտանեան |                       | 59 |
| <i>Մի համառօտ ակնարկ «Խման և Վերան»</i>                                                                     |                       |    |
| <i>կազմակ. 1918 և 19 զործ.</i> —Մ. Տ. Սահակեան                                                              |                       | 66 |

|                                                                                                                                         |      |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------|
| 1919 թ. դեկտ. 12-ին կապացած Հայաստ. Հանրապ. Գիւղատնտ. և հրահանգիչ համադր. որդունի բից                                                   | 77   |
| <b>ԲՐՈՆԻՎՈՆ</b>                                                                                                                         |      |
| 1) Երկրագործական բաժանունների կենդանական Ստատիստիկական Բիւրօ:                                                                           |      |
| 2) Հայաստանի հրապիւս տնտեսութեան:                                                                                                       |      |
| 3) Անասնաբուժական վերահսկողութեան գործունէութիւնը 1919 թ. ընթաց:                                                                        |      |
| 4) Երևանի գաւառական ինքնակառավարութեան գիւղատնտ. գործունէութիւնը:                                                                       |      |
| 5) Երկու խօսք 1920 թ. զարեանցանքի մասին:                                                                                                |      |
| 6) Կրծողների դէմ կռուելու գիւղատնտ. համադր. Ալեքսանդրապօլում                                                                            | 83   |
| ՎՐԻՂԱԿՆԵՐ                                                                                                                               | 93   |
| ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԵՐ                                                                                                                        | 93   |
| ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ                                                                                                                          | 97   |
| ՅԱԽԵԼԻԱԾ                                                                                                                                |      |
| Գիւղատնտեսութեան և Պետական Գոյքերի Գլխաւոր Վարչութեան 1919 թ. Նախաշնիւր. Գիւղ. եւ Պետ. Գայմերի Գլխաւոր Վարչութ. Գառալարի Ստ. Կամսարական | 1—14 |

«Գիւղատնտեսական հանդէս»-ին բովանդակութիւնը, 1920:

Այս 113 էջ հրատարակութեան կարելոր մասը այժմեական կշիռ ունի, քանի որ 1918-ին արդէն եզրակացուցած էին, որ Հայաստանի տնտեսութեան ապագան, այսօրուան նման, նոյնպէս հիմնականօրէն գիւղատնտեսութեան մէջ կը կայանայ եւ երկրորդ թեթեւ ճարտարարուեստին մէջ: Այժմեական, քանի որ վերանկայացումէն ետք 28 տարի է, որ յարաբերաբար նոյն աշխարհաքաղաքական տնտեսական պայմաններուն մէջ կը գտնուին Հայաստանն ու Արցախը:

Խ. (Խաչիկ\*) Սամուկեանի «Գիւղատնտեսութեան զարգացման պայմանները Հայաստանում» յօդուածը կը սկսի (էջ 47-53, հատուածներ՝ արեւմտահայերէնի վերածուած՝). «Մեզմէ շատերը տակաւին կ'օրօրուին (մինչեւ այսօր\*) այն երազանքներով, որ Հայաստանի անկախութեան իրականացումով հայ քաղքենի դասակարգին եւ օտար դրամատիրերուն դրամագլուխները Հայաստան պիտի հոսին ու ստեղծեն գործարարական ճարտարարւեստ, որ անշուշտ մեր հայրենիքի տնտեսական զարգացումին պիտի ծառայէ: Սակայն ասոր համար արդեօք գոյութիւն ունի՞ն համապատասխան տուեալներ:

«Արդիւնաբերութեան դրամագլուխը կրնայ ազատ մուտք գործել այն երկիրները, ուր զարգացման համար շահաւետ ասպարէզ



Հայաստանի խաղողի բերք



Գետնախնձորի բերք

կը գտնուի, ուր իր գոյութեան համար կը գտնէ շարք մը անհրաժեշտ պայմաններ, ինչպէս՝ հողմ նիւթերու հարուստ պաշար կամ դիրքի մատակարարում, պատրաստի վառելանիւթ գլխաւորապէս՝ հանքածուխ (շոգեշարժ մեքենաներու համար\*), արտածումի յարմարութիւններ, աշխատատեղերու առատութիւն եւ սպառումի շուկաներու մօտիկութիւն, ճամբաներու՝ հաղորդակցութեան դիրքութիւն, բնակչութեան (ճարտարարուեստական\*) մշակոյթի եւ մեքենական որոշ չափի բարգաւաճ մակարդակ եւ, վերջապէս, քաղաքական՝ պետական գոյութեան կայունութիւն եւ արտաքին շուկային մէջ մրցակցութեան հնարաւորութիւն: Այս բոլորէն ոչ մէկը կը գտնուի Հայաստանի մէջ, ո'չ միայն Ներկայիս, այլ նաեւ՝ մօտիկ ապագային:

«Սա բնական երեւոյթ է: Հայաստանը, ինչպէս՝ ամբողջ Անդրկովկասը, բացառութեամբ երկու մեծ քաղաքներու, Գերմանիա-ՑՕՐԵՆ ՀՈՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԿԻՐ Է\*։ Այստեղ արտադրողական գործունէութիւնը եապէս հողագործութիւնն է՝ գիւղատնտեսական բոլոր ճիւղերով (անասնապահութիւն եւ այլն\*)»:

«... Սակայն ասով բնա՛ւ չի նսեմանար մեր երկրի տնտեսական նշանակութիւնը: Եթէ Հայաստանը Ներկայիս իր հողագործական բնոյթին պատճառով չունի (ծանր\*) ճարտարարուեստի յարմար պայմաններ, սակայն գիւղատնտեսական զարգացումի համար ամենէն հարուստ տուեալները ունի: Այդ գործունէութիւնն է, որ հայ ժողովուրդին հարստութիւնը, տնտեսական կարողութիւնը եւ ուժի գրաւակները կը կազմէ:

«... Հայաստանը իբրեւ երկրագործական երկիր՝ կրնայ արտադրել ու մատակարարել հողմ նիւթեր: Հացահատիկներու մշակումը, այգեգործութիւնը, բանջարաբուծութիւնը, բամպակագործութիւնը եւ այլ արժեքաւոր մշակումներ, անասնաբուծութիւնը իր բազմաթիւ տնտեսական ճիւղաւորումներով (կաթնեղէն՝ կարագ, պակիր, կաշի եւ այլն\*), շերամապահութիւնը, մեղուաբուծութիւնը եւ այլն կը յանգին մէկ հասարակ յայտարարի, այն է՝ հողի, երկրի մշակումին: **Բոլոր այս ճիւղերը մեր հայրենիքին ու ժողովուրդին միակ տնտեսական հարուստ աղբիւրներն են, որոնք կը բխին մեր վիճակին իրական պայմաններէն, անոնք միա՛կ տնտեսական արժեքներն են ու գիւղացիական աշխատանքին ստեղծած բարիքները, որոնք իրապէս կը հարստացնեն մեր երկիրը եւ ժողովուրդը\*։**


|                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                           |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                         |
| Մեզանում շատերը օրօրուում են տակաւին այն երազանքներով, թէ Հայաստանի անկախութեան իրականացումը հայ բուրժուազիայի և օտար կապիտալիստների դրամագլուխները պիտի հոսեն Հայաստան ու ստեղծեն այդպիսի գործարարական ինքնատրոյս, որ անշուշտ ծառայելու է մեր հայրենիքի տնտեսական զարգացմանը: Բայց զրա համար գոյութիւն ունենալու է իրական պայմաններ և զման համապատասխան առեւտրեր: Արդիւնաբերական կապիտալը կարող է ազատ մուտք գործել այն երկրները, որտեղ հա չափաւէտ ասպարէզ ունի իւր զարգացման, որտեղ հա իւր գոյութեան համար կ'գտնի մի շարք անհրաժեշտ պայմաններ, այն է հողմ նիւթեր, հարուստ ապար կամ գիւղիկ մատակարարում: |

«Գիւղատնտեսութեան զարգացման պայմանները Հայաստանում» յօդուածին սկիզբը:

« Խտացուած տնտեսութեան կերպը եւ միջոցները եւ գիւղատնտեսութեան կատարելագործուած եղանակները միակ միջոցները կը հանդիսանան, որոնք հնարաւորութիւն կու տան երկրին արտադրող ուժերը կատարելապէս օգտագործելու եւ բազմատեսակ հարուստ հողմ նիւթեր կուտակելու:

« Եւրոպական շարք մը երկիրներու յաջող փորձը՝ շրջուն ուսուցիչներու (հողագործութեան մասնագէտ\*) դաստիարակներու գործունէութիւնը, փորձառական գիւղատնտեսական կայաններու եւ ցուցադրական (մոուլ\*) դաշտերը, գործիքներու պահեստները, նաեւ օգնութեան այլ միջոցները, համագործակցական ընկերութիւնները եւ մանր վարկային հիմնարկները հսկայական դեր ունեցած են արեւմտեան Եւրոպայի գիւղատնտեսութեան զարգացման մէջ (որոնց փորձէն պէտք է օգտուիլք\*)»:

« Պետք է նշել, որ մեր երկիրը գիւղատնտեսական գործունէութեան ամենէն ընդարձակ ասպարէզը ունի ու՝ արտադրողական ուժերու հսկայական հարստութիւն: Այստեղ այլպեան տնտեսութենէն մինչեւ մեծարեւադարձային մշակոյթով կարելի է արտադրել բոլոր ճիւղերու գիւղատնտեսական բարիքները՝ ստեղծելով հողմ նիւթերու անսպառ ու բազմատեսակ պաշար:



|                                                                                                                                                                       |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Քաղաքի վարժի, ժամը 5 առաւելաբ հող կենդիւ եւ միայն 9 փոքրամե Բաղիկ կապաւ:                                                                                              |
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԱՐ ԵՈՒՏՈՎ ՑԱՆԱՆԵԼԻ                                                                                                                                        |
| Բաղաւկան հանքածանօթ շէ՛ԼԱԴ Գործարանի օթօժապիւններ, բաժնակաւորներ, երկրագործական և այլ մեքենաներ                                                                       |
| Հայաստանի ընդհ. Երկաշէնացուցիչ                                                                                                                                        |
| Fore Bonaparte 23 Milan (Italie)                                                                                                                                      |
| H. K. Ghazarossian { Omer Abid Han 3e etage No. 8-9-10 Constantinople                                                                                                 |
| Մա՛ր բաժնանութեանց հա՛ւար դի՛մէլ երեւո՛նի ներկայացուցիչ Մեկթեւէ՛թ Ե՛նյաթեանին: Հա՛սէ Ե՛րօլեան (Աստաֆեան) № 8, Ջա՛նփուլաջեանի խա՛նութիւնում, Կա՛շակցութեան տան դի՛մաց: |

Հողագործ մեքենաներու ծանուցում, առաջինը՝ «Յառաջ» 18-9-1920-ին եւ այլ թիւերու մէջ:

«Վերոնշեալ տուեալները նկատի առած՝ կ'եզրակացնենք, որ Ներկայ իրական պայմաններուն մէջ անելի դրական արդիւնքի կրնանք հասնիլ, եթէ մեր ջանքերը կեդրոնացնենք գիւղատնտեսութեան կատարելագործումին վրայ:

Խ. Սամուկեան»:

Այժմ այս նոյն եզրակացութեան պէտք է յանգինք. հեգնօրէն, սակայն, իրերայաջորդ իշխանութիւնները Հայաստանի ունեցածին՝ սեփական այս հսկայական դրամագլուխին հանդէպ անհրաժեշտ հետաքրքրութիւն չցուցաբերեցին՝ կեդրոնականով գլխաւորաբար «ցանկացած» օտար ներդրումներու վրայ... Իր քարոզարշաւին ընթացքին Նիկոլ Փաշինեանը նաեւ անհեռատես մօտեցումով մը ստորադասեց գիւղատնտեսութիւնը, փոխարէնը՝ քաջալերեց բարձր «տեխնոլոկիան»՝ արհեստագիտութիւնը, որ արդէն բնական կերպով կը զարգանայ եւ պետական քաջալերանքի չի՝ կարօտիր եւ ասոր իբրեւ դժբախտ հետեւանք, փաստօրէն, ան ջնջեց գիւղատնտեսութեան Նախարարութիւնը...

Ի վերջոյ, Հայաստանի բնակչութիւնը իր հողին վրայ աշխատելով է, որ երկիրը պիտի զարգացնէ եւ կառուած մնայ հողին, իր գիւղին, բնակավայրին եւ ո'չ թէ՝ Երեւանի գրասենեակներուն մէջ համակարգիչին առջեւ նստած: Օրինա՛կ քաղենք Հոյանտայէն, որ իբրեւ ազգային տնտեսական քաղաքականութիւն, շուրջ 20 տարիներ առաջ, հակառակ իր ցուրտ ու անարեւ, ամպոտ կլիմային, որոշած եւ ծրագրած էր դառնալ երկրագործական երկիր, եւ այժմ ան աշխարհի սննդամթերք արտածող մեծագոյն երկիրներէն է՝գրաւելով ԱՆՀԱԲԱՏԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ԴԻՐԺԸ: Sten՝ (4), (5), (6), (7), (8), (9):

Նոյն հրատարակութեան մէջ է նաեւ (էջ 77-82) «12 դէկտեմբեր 1919-ին կայացած Հայաստանի Հանրապետութեան գիւղատնտեսների եւ հրահանգիչների համագումարի որոշումներից» խորագիրով տեղեկագիրը, որ ընկալումներէ ետք կու տայ շարք մը մանրամասն որոշումներ, ստորեւ՝ անոնց վերակգիրքը.

|                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                   |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Գիւղատնտեսութեան առանձին նախարարութիւն հիմնելու մասին. —                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                          |
| Երկրի արդիւնաբերական ուժերի զարգացման մի շարք բարենորոգումների հետ պետութիւնը գլխաւոր ուղարկութիւնը պէտք է գործնի պիւղատնտեսութեան բարձրացմանը: Դր մեր, պետութեան հիմնի է կողմում երկրի գիւղատնտեսական նորածնութիւնների աշխատանքների կանոնաւոր ընթացք տալու և գիւղատնտեսութեան հետ կապուած այլ ճիւղերի և գիւղատնտեսական արդիւնաբերութիւնների բարձրացնելու համար անհրաժեշտ է այդ աշխատանքների կենտրոնացնել մի ինքնուրու իրաւագործիւնաբերութեան մէջ, որպիսին կարող է ներկայանալ գիւղատնտեսական նախարարութիւնը: Ի նիւտի ունենալով այդ համազումար անխնամակիւն անհրաժեշտութիւն է համարում Գիւղատնտեսութեան և Պետական Գոյքերի Գլխաւոր Վարչութիւնը վերածել Գիւղատնտեսական նախարարութեան: |

Համագումարին եզրակացութիւն որոշումը՝ գիւղատնտեսութեան առանձին Նախարարութիւն հիմնելու մասին:

1. «Կրծողներու (բերքը փճացնող կենդանիներ՝ դաշտամուկ, առնետ, աքիս, կզաքիս եւ այլն\*) դէմ պայքարի մասին, 2. Գետնախնձորի ցանքերուն մասին, 3. Գիւղատնտեսական կայաններու կահաւորումի եւ բնակչութեան հողագործութեան մեքենաներ մատակարարելու մասին, 4. Գիւղատնտեսական բարձրագոյն կրթութիւն ստանալու համար արտասահման ուսանողներ ղրկելու մասին, 5. Մեղուաբուծութեան զարկ տալու մասին, 6. Հաշուետուութեան ձեւի եւ գլոյքապահութեան մասին, 7. Գիւղատնտեսական մեքենաների հաւաքելու եւ վերանորոգելու մասին, 8. Փարկան ցանքին համար սերմացուի գնումին եւ բաշխումին մասին, 9. Համայնական ցանքերը կազմակերպելու մասին, 10. Պետական ցանքերը կազմակերպելու մասին, 11. Բանջարանցային սերմնաբուծութեան ու պտղատու եւ զարդարանքի ծառերու տնկարաններու մասին, 12. Գիւղատնտեսական պաշտօնութեան (պետական\*) աշխատավարձերու հարցին մասին որոշում չառնուիլ, 13. Գիւղատնտեսական քաղտնետնութեան (պետական\*) համար տնտեսութիւն հիմնելու մասին, 14. Գիւղատնտեսական ցանքերը կազմակերպելու մասին, 15. Բամպակի մշակութեան մասին, եւ վերջապէս՝ 16. Գիւղատնտեսութեան առանձին Նախարարութիւն հիմնելու մասին. (ստորեւ որոշումը)՝ «Երկրի արդիւնաբերական ուժերու զարգացման շարք մը բարենորոգումներուն հետ, պետութիւնը գլխաւոր ուշադրութեան առարկան պէտք է դարձնէ գիւղատնտեսութեան բարգաւաճումը, որ մեր պետութեան հիմը կը կազմէ: Երկրի գիւղատնտեսական արդիականացումին կանոնաւոր ընթացք տալու եւ յարակից ճիւղերու արդիւնաբերութիւնները բարձրացնելու համար անհրաժեշտ է այդ աշխատանքները կեդրոնացնել իրաւագործական հիմնարկութեան մը մէջ, որ գիւղատնտեսական Նախարարութիւնն է: Նկատի առնելով այդ, համագումարը անյետաձգելի անհրաժեշտութիւն կը համարէ Գիւղատնտեսութեան եւ Պետական գոյքերու գլխաւոր վարչութիւնը վերածել Գիւղատնտեսական Նախարարութեան»: Եւ այդպէս ալ եղաւ:

Այս նոյն յանձնարարականը այժմ կ'ուղղուի նաեւ Հայաստանի Հանրապետութեան այժմու իշխանութեան:

## ՅԱՐՈՒՅ ԶԵԻՆԵՏԱՆ

8 մայիս 2019  
Շար. 1

\* Լուսաբանութիւնները եւ ընդգծումները իմս: Շանթ. - Լուսակարները այլ աղբիւրներէ առնուած են: (1) [https://hy.wikipedia.org/wiki/Հայաստանի\\_Հանրապետութեան\\_Կառավարութիւն\\_\(1918-1920\)](https://hy.wikipedia.org/wiki/Հայաստանի_Հանրապետութեան_Կառավարութիւն_(1918-1920)) (2) <http://tert.nla.am/mamul/gyughatnesakan-handes/Table.html> (3) «Գիւղատնտեսական հանդէս», թիւ 1, 1920, Երեւան, 113 էջ, «Կուտուրա» տպարան: (4) <http://www.aztagdaily.com/archives/434531>«Անդրադարձ. Հայաստանի Հանրապետութիւն. 100-ամեակ. «Հայաստանի Զրային Հարստութիւնները»՝ Ուսումնասիրութիւն» (5) <http://www.aztagdaily.com/archives/372994>«Անդրադարձ. Հայաստանի Հողագործութեան Բնագաւառի Կնդիրները» (6) <http://www.aztagdaily.com/archives/370783>«Անդրադարձ. «Այս Փոքր երկիրը Աշխարհը Կը Կերակրէ» Բ. (7) <http://www.aztagdaily.com/archives/369316>«Անդրադարձ. «Այս Փոքր երկիրը Աշխարհը Կը Կերակրէ» Ա. (8) <http://www.aztagdaily.com/archives/364045>«Անդրադարձ. Հայաստանը երկրագործական, Ծարտարարուեստական, Թէ՛ Այլ Բնագաւառի երկիր» (9) <http://www.aztagdaily.com/archives/273766>«Հայաստանի Հանրապետութեան Եռամեայ շարագացման Այժմեական Ծրագիրը Սը Անհրաժեշտութիւնը»

«ՈՌԻՍԹԱՒԻ 2»-Ի ՂԵԿԱՎԱՐԸ ...

Ճարուսակուած Ա. Էջէն

«ՌԻԱ Նովոսթի»-ն տեղեկացուցած է Նաեւ, որ Թիֆլիսի բողոքի ցոյցի մասնակիցները փակած են կեդրոնական Ռուսթավէլի պողոտան՝ բարձր վանկարկելով իրենց պահանջը՝ Ներքին գործոց Նախարար Կերկիա Կախարիայի հրաժարականը:



Նաեւ՝ տեղի ունեցած անկարգութիւններուն պատճառով տուժածներէն մէկը մահացած է: Զիւանդանոցներուն մէջ տակաւին կայ 55 հոգի:

Վրաստանի առողջապահութեան Նախարարութեան տուեալներով՝ 240 տուժածներէն 185-ը արդէն դուրս են հիւանդանոցներէն, իսկ զանազան իրաւախախտումներով բերման ենթարկուած է 350 ցուցարար:

Միւս կողմէ, Վրաստանի մէջ Զայաստանի Զանրապետութեան դեսպանատունը կը տեղեկացնէ, թէ Թիֆլիսի մէջ տեղի ունեցած բողոքի ցոյցերուն ձերբակալուածներու շարքին կայ Զայաստանի քաղաքացի Մինաս Մինասեանը:

ՓՈՒԹԻՆ ԱՐԳԻԼԵՏ ԴԵՊԻ ՎՐԱՍՏԱՆ ԲՈԼՈՐ ԹԻՒՂԵՆԵՐԸ

Ռուսիոյ Նախագահ Վլատիմիր Փութին ստորագրած է հրամանագիր մը, որուն հիմամբ ռուսական օդանաւային ընկերութիւններուն կ'արգիլէ 8 յուլիսէն սկսեալ Ռուսիոյ քաղաքացիները փոխադրել

Վրաստանի տարածք: Այս մասին Նշուած է Զրեմլիկի հարդորագրութեան մէջ:

ՎԱՐՉՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

Ժել Էլ Տիպ, 130 քառ. մետր:

Սին Էլ Ֆիլ, 70 քառ. մետր:

Յեռ. 76-944642:



Ի՞նչ կ'ըսեն ՄՍՏՂԵՐԸ

**Խոյ (21 մարտէն 20 ապրիլ)**  
Անհողութիւն մի՛ ընէք ձեր աշխատանքին մէջ: Զարցի մը պատճառով ձեր կեդրոնացումը պիտի կորսնցնէք որոշ ժամանակ: Զամբերող եղէք եւ մի՛ թերանաք ձեր պարտականութիւններուն մէջ:

**Յուլ (21 ապրիլէն 21 մայիս)**  
Ճամբորդութիւն մը պիտի կատարէք եւ պիտի հետաքըքրիք Նոր մշակոյթներով: Յաջող շրջան մըն է ձեզի համար, օգտուեցէք առիթներէն եւ բարելաւեցէք ձեր դիրքը ձեր գործատեղիին մէջ:

**Երկուորեակ (22 մայիսէն 21 յունիս)**  
Ժամանակն է՝ նիւթական հարցեր քննարկելու ձեր բարեկամներէն մէկուն հետ: Մի՛ յուսահատիք, որքան ալ ձեր աշխատանքային ճնշումները շատնան: Ձեր առողջութեան հոգ տարէք:

**Խեցեցտիւն (22 յունիսէն 23 յուլիս)**  
Մի՛ գայրանաք եւ ձեզի տրուած դիտողութիւնները Նկատի առէք: Մրցակցութիւնը պիտի գօրանայ ձեր պաշտօնակիցներէն մէկուն հետ: Կրկին միասին շարունակելու Նոր առիթ մը տուէք ձեր սիրեցեալին:

**Առիծ (24 յուլիսէն 23 օգոստոս)**  
Կանուխ գացէք աշխատանքի եւ մի՛ թերանաք ձեր պարտականութիւններուն մէջ: Այս շրջանին պայմանները առիթ պիտի չտան ձեզի բաւարար հանգստանալու: Զամբերեցէք ու ամեն բան պիտի լուծուի:

**Կոյս (24 օգոստոսէն 23 սեպտեմբեր)**  
Տարբեր Նախափորութիւններու ժամանակ պիտի տրամադրէք: Ինքնավստահ էք ու բարձր տրամադրութիւն ունիք: Մի՛ լաւննուիք դժուարութիւններու, այլ շարունակեցէք մեծ խանդավառութեամբ յառաջ երթալ:

**Կշիռք (24 սեպտեմբերէն 23 հոկտեմբեր)**  
Վատութիւն մի՛ ընէք ձեր սիրելիներուն: Ճնշող շրջան մըն է, համբերող եղէք: Ժամանակ տրամադրեցէք ձեր ընտանիքի անդամներուն: Անձնական գետիկ վրայ հարց մը պիտի ունենաք:

**Կարիծ (24 հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)**  
Զանդարտութեամբ եւ առանց վիճաբանութեան արտայայտեցէք ձեր կարծիքը: Յաջող ու արդիւնաբեր շրջան մըն է: Վերատեսութեան ենթարկեցէք ձեր նիւթական հաշիւները:

**Աղեղնաւոր (24 Նոյեմբերէն 21 դեկտեմբեր)**  
Նիւթապէս խնայողութիւն պէտք է կատարէք, որպէսզի դժուարութեան մէջ չյայտնուիք: Ձեզ ուրախացնող եւ հաճելի պատասխան մը պիտի ստանաք: Ձեր հին բարեկամներէն մէկուն հետ պիտի հանդիպիք:

**Այծեղջիր (22 դեկտեմբերէն 20 յունուար)**  
Ձեր բախտը պիտի գօրանայ այս շրջանին: Խանդավառ էք՝ Նոր էջ մը սկսելու ձեր կենցաղին մէջ: Վերջ պիտի դնէք ձեր անցեալի սպասողական ու կախեալ վիճակին:

**Շուկանուշ (21 յունուարէն 19 փետրուար)**  
Ժամանակը հասած է վերջ դնելու դժուար շրջանի մը եւ լուծելու հին հարցերը: Մի՛ վարանիք համարձակօրէն քննարկելէ ու ձեր միտքը արտայայտելէ: Մի՛ նեղացնէք ձեր շուրջիները:

**Ձուկ (20 փետրուարէն 20 մարտ)**  
Որքան ալ ձեր բարոյութեան չարութեամբ պատասխանեն, մի՛ չարանաք: Միշտ յիշեցէք, որ ամեն մարդ օր մը իր ցանաձը պիտի հնձէ:

ԺԱՄԱՆՅ

ԽԱՉԲԱՈ

|    | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
|----|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|
| 1  |   |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 2  |   |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 3  |   |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 4  |   |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 5  |   |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 6  |   |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 7  |   |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 8  |   |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 9  |   |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 10 |   |   |   |   |   |   |   |   |   |    |    |
| 11 |   |   |   |   |   |   |   |   |   |    |    |

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- Միայնակեաց կրօնաւոր - Թշուառ:
- Դաշտավայր - Օրաթերթ:
- Զգտիլ - Խանասարի արշաւանքին մասնակցած ֆետայիներէն՝ տասնապետի աստիճանով:
- Նուաստ, տրուպ - Զուր:
- Յոգնակերտ մասնիկ - Վայրի ծարխտ - Եպիսկոպոսական:
- Առարկայ - Թրքահայ մամուլէն:
- Դինն ու Նորը կը կազմեն Աւետարանը - Այբուբենէն:
- Մանելիք - Վարթեղէն սնունդ:
- Աւետիգ Իսահակեանի անաւարտ վեպը (երկու բար):
- Կրկնուած բաղաձայններ - Երկնային լուսաւոր մարմին:
- Ոչխարի պղչ - Ետին դարձած՝ վարպետ:

ՈՐԴԱՅԱՅԵԱՏ

- Ակնթարթ, երկվայրկեան:
- Ստուգն, կոկորդ - **Շոքուա**:
- Տապալի - Սահմանային տուրք:
- Դեռ չիրատարակուած - Մորթէ պարկ:
- ԱՄՆ-ի 16-րդ Նահանգը:
- Կրկնուած գիրեր - Փութութիւն - Կարիծ:
- Դրկից տառեր - Տարածքի միւտոր - Յետոյ:
- Տերեփուկ - Մաքուր, անբիծ:
- Շնտանի անասուններ բուժանելու հողային կալուած - Ցանցառ:
- Արժէքի կէտ - Իգական անուն - Ռուսերէն՝ այր՝
- Ձերմեռանդ, երկուդած - Դրկից գիրեր:

Պատրաստեց՝ Տ.Ա. ՄԱՂԱՉԱՐԵԱՆ

ՍՈՒՏՈՔՈՒ

|   |   |   |   |   |   |   |
|---|---|---|---|---|---|---|
| 6 |   | 9 |   |   | 2 |   |
| 5 | 9 |   |   | 7 |   |   |
|   |   | 8 |   | 1 |   |   |
| 2 |   |   | 7 |   | 1 |   |
|   |   | 6 | 4 |   | 5 |   |
| 9 | 3 |   |   |   |   |   |
| 1 |   | 4 |   |   |   | 8 |
| 5 | 8 | 3 |   |   |   |   |
|   |   | 7 |   | 2 | 9 |   |

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւր 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրառումով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիից իւրաքանչիւր բաժին ունենայ 1էն 9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով՝ ո՛չ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար՝ կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ զետեղուած են:

ԴՆՏԻՈՐԻ ԺԱՄԱՆՅԻ ԽԱՉԵՐՈՒՆ ԼՈՒՃՈՒՄՆԵՐԸ

| ԽԱՉԲԱՈ |   |   |   |   |   |   |   |   |   |       |
|--------|---|---|---|---|---|---|---|---|---|-------|
|        | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 11 |
| 1      | Խ | Ո | Չ | Ա | Կ | Մ | Ի | Ա | Կ | Ա     |
| 2      | Լ | Խ | Ա | Կ | Ա | Մ | Ի | Ա | Կ | Ա     |
| 3      | Ձ | Ա | Ր | Մ | Ե | Ր | Ա | Ն | Թ |       |
| 4      | Ո | Տ | Ե | Փ | Ա | Մ | Ի | Լ |   |       |
| 5      | Ր | Ա | Ա | Ա | Ա | Ա | Ա | Ա | Ա | Ա     |
| 6      | Ե | Ր | Ե | Ի | Կ | Ձ | Ա | Ր | Ի |       |
| 7      | Ն | Ա | Ա | Ա | Ա | Ա | Ա | Ա | Ա | Ա     |
| 8      | Ի | Մ | Ա | Ա | Ա | Ր | Ե | Ի | Ե |       |
| 9      |   | Մ | Ի | Ա | Ա | Ա | Ա | Ա | Ա | Ա     |
| 10     | Ա | Լ | Ի | Կ | Թ | Ե | Ա | Ա | Մ | Ի     |
| 11     | Մ | Ի | Կ | Պ | Ե | Տ | Ե | Ի | Լ |       |

| ՍՈՒՏՈՔՈՒ |   |   |   |   |   |   |   |   |   |  |
|----------|---|---|---|---|---|---|---|---|---|--|
|          | 3 | 9 | 6 | 7 | 4 | 1 | 5 | 2 | 8 |  |
| 1        | 8 | 4 | 1 | 2 | 5 | 9 | 7 | 6 | 3 |  |
| 2        | 2 | 5 | 7 | 6 | 8 | 3 | 1 | 4 | 9 |  |
| 3        | 1 | 7 | 4 | 9 | 2 | 5 | 3 | 8 | 6 |  |
| 4        | 5 | 2 | 8 | 1 | 3 | 6 | 4 | 9 | 7 |  |
| 5        | 9 | 6 | 3 | 8 | 7 | 4 | 2 | 5 | 1 |  |
| 6        | 4 | 8 | 9 | 5 | 1 | 7 | 6 | 3 | 2 |  |
| 7        | 6 | 1 | 5 | 3 | 9 | 2 | 8 | 7 | 4 |  |
| 8        | 7 | 3 | 2 | 4 | 6 | 8 | 9 | 1 | 5 |  |

1969 - 2019

22 ՅՈՒՆԻՍ

50 ՏԱՐԻ ԱՌԱՋ

ՏՐՈՎԱԴԱՅԻ ՁԻՆ

Վերջին տարիներուն ո՞վ է ճաշակած դառնութիւնը հրաժեշտի այցելութիւններուն: Անպայման ազգական մը, բարեկամ մը կամ ծանօթ մը կայ, որ կը մեկնի դէպի հեռաւոր աշխարհներ: Ամերիկան ու Զանաւան դարձած են Աւետեաց Երկիր, ուր կը ձգտին հասնիլ մեր ազգակիցներու հոգիները: Երանի՜ թէ հարցը փակուէր միայն հոգիներու թռիչքով: Մարմինները կը հետեւին շուտով այս թռիչքին՝ օդանաւի մը թելերուն վրայ: Ես ալ վերջերս գացած էի ճամբու դնելու սիրելի բարեկամ մը, որ հրաժեշտ կու տար Լիբանանի արեւոտ լեռներուն՝ երթալ հաստատուելու համար Զանաւայի սառնամանիքներուն մէջ: Ակներու տխրութիւն մը կար բարեկամիս դէմքին վրայ: Տուն-տեղ քանդել, տարիներու վարժութենէն հրաժարիլ եւ անծանօթ վայրերու մէջ Նոր կայք հաստատել. կը զգայի, որ դիւրին ըլլալու չէր:

Օդակայանի իրարանցումին մէջ գտանք ազատ անկիւն մը եւ Նստանք քով-քովի: Բարեկամս խորը ունեցող մէկն էր, երկար առէն աշխատած՝ ազգային ու մշակութային կազմակերպութիւններու մէջ: Լաւ կ'ըմբռնէի իր լուծեան Ներքէն թաքնուած խոր տառապանքը: Կ'ըմբռնէի, բայց չէի հասկնար, թէ ինչո՞ւ տուած էր յանկարծ մեկնելու այս որոշումը:

- Կը ներես,- ըսի պահ մը վարանելէ ետք,- մասնաւոր պատճառ մը ունէի՞ր գաղթելու համար: Որքան գիտեմ՝ հոս գործ գէշ չէր. ընտանիքդ ապրեցնելու չափ հասոյթի աղբիւր մը ունէիր:

Պահ մը աչքերուս Նայեցաւ իր խոնաւ Նայունաձեղով, թուրք կուլ տալ փորձեց, ապա արտասանեց ծանօթ տարագը.

- Ընտանիքիս ապահովութեան, զաւակներուս ապագային համար:
- Չաւակներուդ ապագան ո՞վ կրնայ երաշխաւորել Զանաւայի մէջ: Եւ յետոյ՝ ապագայ ըսելով միայն նիւթակա՞նն է արդեօք: Չաւակներդ դեռ ազտիկ են, կրնան հոգեպէս կորսուիլ:
- Այսինքն ի՞նչ ըսել կ'ուզես, հոն քաղաքակիրթ երկիր է, բարձր ուսում, լայն ասպարեզ,- առարկեց բարեկամս ջղային շեշտով մը:
- Ըսել կ'ուզեմ, որ իբրեւ հայ պիտի կորսուիս:
- Գիտէի մտքինդ,- վրայ բերաւ իսկոյն,- եւ չեմ մեղադրեր քեզ այդպէս մտածելուդ համար: Ամիսներ շարունակ ես ինքս ալ տառապէր եմ զաւակներս կորսնցնելու գաղափարով: Վստահ եմ, որ չես կասկածիր հայու զօրաւոր զգացումներու վրայ: Եւ սակայն...
- Սակայն ի՞նչ:
- Իմ ապրած հոգեկան տրամս հասաւ իր վախճանին: Գուցէ շա՛տ ցաւալի, բայց տրամաբանական վախճանին: Վերջ տուի Ներքին պառակտումիս, որ զիս կ'արիւնէր առնէն մը ի վեր: Ամենուն առջեւ չեմ կրնար ըսել ասիկա, բայց քեզի պիտի խոստովանիմ: Զարկիւնք կան ինծի պէս մտածող, որոնք զանազան պատճառներով չեն ուզեր անկեղծ ըլլալ եւ արտայայտուիլ արտօքօրէն: Այս պահուս ես քաջութիւնը պիտի ունենամ ըսելու ճշմարտութիւնը:

Բարեկամս պահ մը լռեց, թաշկինակով սրբեց ճակտի քրտինքը եւ շարունակեց.

- Արտասահմանի մէջ մենք մեր ազգային գոյութեան պայքարը կորսնցուցած ենք: Յիսուս տարի պայքարեցանք, յուսացինք, յուսադրեցինք, սպասեցինք եւ տեղ մը չհասանք: Ինչ որ կայ եւ պիտի ըլլայ այսուհետեւ, քաշքուշ է, հոգեվարքի երկարածգում: Արդ, ի՞նչ իրաւունքով ես իմ զաւակներուս ապագան խորտակում յանուն դատի մը, որ հետզհետեւ աւելի ու աւելի ցնորք կը դառնայ: Ռ՛րա ալ ըլլան՝ անոնք կորսուած են ազգային տեսակետէն: Տարիներու հարց է միայն: Անելի լաւ չէ՞ ուրեմն, որ մեծ ազգի մը եւ մեծ երկրի մը զաւակները դառնան, քանի հնարաւոր է եւ քանի այդ հնարաւորութեան բանալին իմ ձեռքս է: Մենք դժբախտ եղանք, զրկանքներով մեծցանք, վտանգներու սարսափը ապրեցանք տեսաբար, գոնէ մեր զաւակները շնորհքով կենաք մը տեսնեն:
- Կը ցաւիմ, որ այսքան շուտ...
- Գիտեմ, գիտեմ,- ընդմիջեց զիս բարեկամս,- ի՞նչ կ'ուզես մտածել իմ մասին, պարտաւորական, Նահանջող, Եասեր... դժբախտաբար այ՛ս է իրականութիւնը: Մեր առջեւ դռները գոց են, եւ ուրիշ ելք չունինք: Եթէ համոզուած ըլլայի, որ իմ ճիգերս ու զոհողութիւններս բան մը կրնան փոխել մեր կենսքի դժբախտ պայմաններէն, ո՞չ միայն կը մնայի, այլեւ կ'աշխատէի զաւակներս ալ Նետել պայքարի առաջին գիծերուն վրայ: Սակայն ելք չեմ տեսներ... թող երբան, տղաքս գոնէ իբրեւ մարդ երջանիկ ապրին:

Բարձրախօսը ազգադարեց ճամբորդներուն մաքսատուն իջելէ: Բարեկամս ոտքի ելաւ եւ շաւկեց պայուսակը: Ձեռքի վերջին սեղմում մը, եւ արդէն ես մինակ էի ամբողջ իրարանցումին մէջ: Մինակ էի՝ իրար հիմշտկող եւ իրար հարուածող մտածումներու ահաւոր գրոհի մը դիմաց:

Ահա պատականակ հայորդի մը, տարագրութիւն եւ որբանոց տեսած, հայ գիրով եւ հայ գրքով սնած, հայկական խոտակերտ համար պայքարած, զաւակներ աշխարհ բերած Նախանձախոնդի հայ մը, որ կը մեկնէր զինաթափ, գլխահակ, համակերպ: Իրա՞ն էր արդեօք տուած հաւաստիքը, որ վերջ գտած է իր Ներքին երկուութիւնը եւ հաշտուած՝ գաղթաշխարհի պայմաններուն հետ: Զաւատա՞ւ, թէ ա՛լ պիտի տառապաի հայ ըլլալուն եւ հայ ջնջալուն համար: Պիտի կրնա՞յ խաղաղ սրտով դիտել իր զաւակներուն այլասեւորող դէմքը եւ լսել օտարախօս լեզուն: Զոգին ետդարձ պիտի չկատար՝ օր մը:

Դժուարին հարցումներ: Կարեւորը հարցին այս եղեւք չէր սակայն: Ահաւոր էր ընդունիլ, թէ մեկնողներուն մէջ բարեկամս բացառութիւն չէր կազմեր, թէ՛ բազում էին անոնք, որ Նոյնը կը մտածէին, բայց չէին արտայայտուիլ:

Ու խորիցեայ. ճշմարիտ աղետները մեկնումները չեն այնքան, որքան՝ մեկնողներուն հոգեբանութիւնը: Կար ժամանակ մը, տակաւին երէկ, որ աշխարհիս ծայրը զացող հայն ալ կ'երթար հոն հայ մնալու եւ զաւակները հայ մեծցնելու ուխտով: Զայ ապրիլը պարտականութիւն մը չէր, այլ՝ կենսքի իմաստ եւ հոգիի ծայրաւ մը: Կես դարը բաւեց, որ մեր ազգային կենսքի բեմին վրայ ու բեմին ետեւ խացուող տրամաբանութեան համար վերջ գտնէ անձնատուութեամբ:

Մեծ վտանգը հո՛ւս է արդէն՝ խիղճերու գտած հանգիստին եւ սփիւռքի պայմաններուն հետ կլեւած լուռ դաշինքին մէջ:

ՖՈՒԹՊՈԼ.  
ՎԵԹԵՐԱՆՆԵՐՈՒ ՄՐՑԱՇԽԱՐԶ

ԱՅՍՕՐ՝ ՀՄԸՄ - ԱՆՍԱՐ

Հսկողությամբ Լիբանանի ֆուտբոլի ֆեդերասիոնին, Ճինսիի «Ֆուտա Շեհապ» մարզադաշտին վրայ, այսօր եւ վաղը տեղի կ'ունենան վեթերաններու ֆուտբոլի մրցաշարքին վերաբերող երկուքական ճակատումներ:

Այս մրցումները կ'ընթանան բաւական հետաքրքրական մթնոլորտի մէջ, մանաւանդ եթէ նկատի ունենանք այն պարագան, որ ֆուտբոլի անցեալի անուանի եւ փորձառու աստղեր իրարու դէմ յանդիման կու գան շուրջ 15 տարի ետք՝ դարձեալ իրենց անցեալի կազմերուն հետ:

Յետմիջօրէի ժամը 17:15-ին իրարու դէմ կը մրցին Թրիփոլի եւ Սաժես, իսկ երեկոյեան ժամը 21:00-ին, տեղի կ'ունենայ սպասուած ճակատումը՝ ՀՄԸՄ-ի եւ Անսարի միջեւ:

ՀՄԸՄ-ի համակիրներէն կ'անկկալուի ոչ մէկ ճիգ խնայել ներկայ գտնուելու եւ քաջաւերելու իրենց կազմը՝ ՀՄԸՄ-ը:

ԱՍԻՈՅ ՊԱՏԵԹՊՈԼԻ  
ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ Ա. ՓՈԽՆԱԽԱԿԱՅ  
ԸՆՏՐՈՒՇԼՈՒՆ ԱՌԻԹՎ

ԱՔՐԱՄ ՀԱՆԱՊԻ ՍՏԱՅԱԻ  
ՅԱՏՈՒԿ ՇՆՈՐՀԱՌՐԱՆՔՆԵՐ

Ինչպէս ծանօթ է, վերջերս Լիբանանի պատեթալոլի ֆետերասիոնի նախագահ Աքրամ Հալապի ընտրուեցաւ Ասիոյ պատեթալոլի ֆետերասիոնի Ա. փոխնախագահ:

Ասկէ մեկնելով, ան շաբաթ, 22 յունիսին, «Լիքաա» պանդոկին մէջ (Ռապուտ) ընդունեց յատուկ շնորհաւորանքներ, յետմիջօրէի ժամը 15:00-էն 18:00:

Հալապիին շնորհաւորական այցելութիւններ տուին Ասիոյ պատեթալոլի ֆետերասիոնի ընդհանուր քարտուղար Յակոբ Խաչերեան, տարբեր ֆետերասիոններու, ակումբներու, միութիւններու նախագահներ, ներկայացուցիչներ, քաղաքական կուսակցութիւններու պատասխանատուներ, ինչպէս նաեւ մարզական լրագրողներ:



Բոլոր այցելուներն ալ, յաջողութիւն մաղթեցին Հալապիին՝ իր նոր պաշտօնին ստանձնումին առիթով:  
Հալապի ստացաւ երկու յուշանուէրներ, Լիբանանի պատեթալոլի դաշտերու, ինչպէս նաեւ մրցումներուն հսկող յանձնախումբերուն կողմէ:

ՀՄԸՄ-Ի ՖՈՒԹՊՈԼԻ ՄԻՋՄԱՍՆԱԾԻՂԱՅԻՆ ՄՐՑԱՇԽԱՐԶ

ՀՄԸՄ ՊՈՒՐՑ ՀԱՄՈՒՏ  
ՏԻՐԱՅԱԻ ՏԻՏՂՈՍԻՆ



ՀՄԸՄ-ի Լիբանանի Շրջանային վարչութեան կազմակերպած միջմասնաճիւղային ֆուտբոլի մրցումները՝ հովանաւորութեամբ Ստեփան Տեր Պետրոսեանի, վերջ գտան շաբաթ, 22 յունիսին, ՀՄԸՄ Պուրճ Համուտի յաղթանակով (3-1 արդիւնքով): Այս մրցաշարքը, որ յաղթանակ էր ՀՄԸՄ-ի համար, եղաւ առաջինը տարիներէ ի վեր, որ քով-քովի բերաւ մասնաճիւղեր եւ մօտեցուց շրջաններ: 6 մասնաճիւղեր մասնակցեցան տոյն մրցաշարքին՝ Անթիլիաս, Այնճար, Ֆանար, Ռաուտա, Պէյրութ եւ Պուրճ Համուտ:

Մօտիկ ապագային տարիքային մրցաշարքի ծրագիրներ կան՝ առիթ տալու համար հայ տղոց՝ վերադառնալու կանաչ դաշտ:

Ինչ կը վերաբերի մրցաշարքին, անոր ներկայ եղան Շրջանային վարչութեան անդամներ, աւարտականի մրցումը իրարու դէմ հանեց Պուրճ Համուտը, որ լաւ խումբ մը կը կազմէ մասնակցելու Լիբանանի 4-րդ դասակարգի ախոյեանութեան, եւ Պէյրութը, որ իր երիտասարդներու նորակազմ խումբով կը խաղար: Վաչէ Ղուկասեան, Սերժ Գույումճեան եւ Կարօ Չենճիրեան նշանակեցին Պուրճ Համուտի 3 կողերը, մինչ Պարոյր Գույումճեան նշանակեց Պէյրութի միակ կողը:

3-րդ դիրքի մրցումին, Ռաուտա 3-1 ար-



դիւնքով յաղթեց Ֆանարին: Գառնիկ Նորշահեան, Սերուժ Բէշիշեան եւ Ճորճիկ Իշխանեան նշանակեցին Ռաուտայի կողերը, մինչ հալետ նշանակեց Ֆանարի միակ կողը:

Վարձքը կատար բոլոր տղոց: Պէտք է նշել, որ բոլոր մրցումները վարեց իրաւարար Վարդան Մաթոսեան: Մրցումներու աւարտին, Շրջանային վարչութեան անդամներ բաժակներ բաշխեցին բոլոր մասնակից խումբերուն:

ԸՄԲԵԱՄԱՐՏ. ԵՐՈՂՊԱՅԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ  
ԿԵՏԻ ՄԸ ՏԱՐԲԵՐՈՒԹԵԱՄԲ  
ՊԱՐՏՈՒՅՏԱԻ ԱԻԱՐՏԱԿԱՆԻՆ

Իտալիոյ մէջ տեղի ունեցող ազատ ոճի ըմբշամարտի Եւրոպայի պատանեկան ախոյեանութեան, Հայաստանի ներկայացուցիչ Յարութիւն Յովհաննիսեան տիրացաւ արծաթ մետալի:

48 քկ դասակարգին մէջ, հայ ըմբիշը աւարտականին կէտի մը տարբերութեամբ

միայն պարտութիւն կրեց Պեսիր Ալիլիեւ (Մակեդոնիա)՝ 7-6 արդիւնքով:

Յովհաննիսեան կիսաւարտականին 3-2 արդիւնքով յաղթեց ագրպէյճանցի իր մրցակիցին՝ Ռամիթ Յէյպաթովին:

ՆՇԵՆԸ, որ երէկ գիշեր,



Լեոնա Գերդեան 92 քկ դասակարգին մէջ տիրացաւ ոսկի մետալի մը, երբ աւարտականին 6-3 արդիւնքով յաղթեց ռուս Իսլամ Բարթոյեւին:

Գենիկ Ասատրեան 60 քկ դասակարգին մէջ տիրացաւ արծաթ մետալի, մինչ Մենուա Եարիբեկեան՝ պրոնկ մետալի (71 քկ):

«ԶՈՓԱ-ԱՍԵՐԻԵԱ»

ՊՐԱԶԻԼ, ՎԵՆԵԶՈՒԵԼԱ ԵՒ ՉԻԼԻ  
ԱՊԱՀՈՎԵՅԻՆ ՔԱՌՈՐԴ ԱԻԱՐՏԱԿԱՆԻ  
ԻՐԵՆՅ ՏՈՍՍԵՐԸ

Պրագիլի մէջ տեղի ունեցող «Զոփա-Ասերիքա»-ի ֆուտբոլի մրցաշարքին ծիրին մէջ, Նախորդ շաբաթավերջին կատարուեցան շարք մը ճակատումներ:

Ա. խմբակին մէջ, Պրագիլ եւ Վենեզուելա իրենց արձանագրած յաղթանակներուն շնորհիւ ապահովեցին քառորդ աւարտականի իրենց տոմսերը:

Պրագիլ 5-0 արդիւնքով յաղթեց Փերուին, իսկ Վենեզուելա՝ Պոլիվիոյ (3-1): Պրագիլի կողերը նշանակեցին Զասեմիրօ (12-րդ), Ռոպերթօ Ֆիրմիսօ (19-րդ), Էվըրթօն (32-րդ), Տենի Ալվես (53-րդ) եւ Ռիլիան (90-րդ): Անոնց խմբակից Կապրիել ժեսուս մրցումին կորսուած վայրկեաններուն փենալթի մը չկրցաւ կոլի վերածել:

Գ. խմբակին մաս կազմող Չիլի, որ յաղթեց Էքուատորին (2-1), իր կարգին ապահովեց քառորդ աւարտականի իր տոմսը:

Իսկ Բ. խմբակէն իր տոմսը ապահոված է Զոլումպիա:

| Ստորեւ՝ Ա. խմբակին վերջնական դասաւորումը. |    |    |    |     |     |     |
|-------------------------------------------|----|----|----|-----|-----|-----|
|                                           | Յ. | Հ. | Պ. | ՆՇ. | ՍՏ. | ԿԵՏ |
| 1.- Պրագիլ                                | 2  | 1  | 0  | 8   | 0   | 7   |
| 2.- Վենեզուելա                            | 1  | 2  | 0  | 3   | 1   | 5   |
| 3.- Փերու                                 | 1  | 1  | 1  | 3   | 6   | 4   |
| 4.- Պոլիվիա                               | 0  | 0  | 3  | 2   | 9   | 0   |

ՄԻՆԱՔԻ ՄԷՋ ԿԱՏԱՐՈՒՅԱԻ  
ԵՐՈՂՊԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ  
ԽԱՂԵՐՈՒՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄԸ

ՏԻԳՐԱՆ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ  
ՅԱՂԹԵՅ ԱԶՐՊԵՅՃԱՆՅԻ  
ԻՐ ՄՐՑԱԿԻՑԻՆ  
ԵՒ ՀԱՆԴԻՍԱՅԱԻ ԱՌՈՅԵԱՆ

Նախորդ շաբաթավերջին Պիեյոռուսիոյ մայրաքաղաք Միւնսքի «Տիւսամօ» մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ երրօրեայ երկրորդ մարզական խաղերուն պաշտօնական բացման հանդիսութիւնը, որուն կը մասնակցի նաեւ Հայաստան:



Խաղերը բացուած յայտարարեց Պիեյոռուսիոյ Նախագահ Ալքսանտր Լուքաշենքօ:

Անոր մասնակցող երկիրներու տողանցքին ընթացքին Հայաստանի դրօշակակիրը եղաւ կռիւամարտիկ Յովհաննէս Բաջըով, ինչպէս նախապէս յայտարարուած էր:

Հայաստան այս խաղերուն իր մասնակցութիւնը կը բերէ 37 մասնակիցով՝ հետեւեալ 9 մարզածներուն մէջ:

Ըմբշամարտ (յունահռոմէական եւ ազատ ոճի), կռիւամարտ, մարմամարզութիւն, ժիւտօ, սամպօ, հեծելարշաւ, թիավարութիւն եւ քանոյէ, հրացանաձգութիւն եւ պետմիւնթըն:



Ինչ կը վերաբերի տեղի ունեցած մրցումներուն, Տիգրան Կիրակոսեան Հայաստանին ապահովեց առաջին մետալը, երբ սամպօյի մրցումներուն (52 քկ) աւարտականին յաղթեց ագրպէյճանցի իր մրցակիցին՝ ԱկիասիՖ Սամատովին (4-0 արդիւնքով) եւ հռչակուեցաւ ախոյեան:

ԴԱԻԹ ԳՐԻԳՈՐԵԱՆ՝ ՓՈԽՆԱԽՅԵԱՆ

Այս խաղերուն Հայաստանի համար առաջին մետալը ապահովեց Դալիթ Գրիգորեան, որ սամպօյի մրցումներուն հասնելով աւարտականին 82 քկ դասակարգին մէջ պարտութիւն մը կրեց իր ռուս մրցակիցին՝ Անտոնի Փերեփելիուքեւ, 7-0 արդիւնքով:

Հայաստանի այլ ներկայացուցիչ մը՝ Մաքսիմ Մանուկեան, 57 քկ դասակարգին մէջ պրոնկէ մետալին համար իր մղած պայքարին պարտութիւն մը կրեց 9-1 արդիւնքով:

ԹՈՒՐԲԻՈՅ ԻՇԽՈՂ ...

Շարունակուած Ա. Էջէն

սրտով կը հաւատամ, թէ պոլսեցիները վստահաբար լաւագոյն ընտրութիւնը պիտի կատարեն»՝ աւելցնելով. «Ռոպէսգի Պոլիսը համաշխարհային քաղաքի մը վերածուի, ընտրութիւնները կարելոյ առիթներ են երկրին տարածքին մեր ձեռք բերած փորձառութիւնը կիրարկելու»:

Անոր մրցակիցը՝ ընդդիմադիր Հանրապետական ժողովուրդի կուսակցութեան թեկնածու Էքրեմ Իմամօղլու քուտարկեց Պոլսոյ Պէյլիքսուզու շրջանին մէջ, որուն նախկին քաղաքապետն էր: «Ամէն բան օրուան վերջաւորութեան լաւ պիտի ըլլայ», ըսաւ ան:

Նշենք, որ Իմամօղլու նախկին քուտարկութեան ընթացքին յաղթանակ արձանագրած էր ապահովելով քուէներուն 48,8 առ հարիւրը: Եղլտըրըմ ապահոված էր քուէներուն 48,55 առ հարիւրը:

Ըստ նախնական տուեալներուն, Իմամօղլու ապահոված է քուէներուն 53,72 առ հարիւրը, իսկ Եղլտըրըմ՝ 45,37 առ հարիւրը: Վերջինս ընդունեց իր պարտութիւնը՝ շնորհաւորելով իր մրցակիցը: Իմամօղլուի համակիրները անմիջապէս սկսան տօնել անոր յաղթանակը:

Նշենք, որ ընտրութիւնը կը նկատուէր Էրտողանի ժողովրդականութեան շուրջ հանրաքուէ մը:

**ՀՄԸՄ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՍՆԱԾԻՂ**

**ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

ՀՄԸՄ Անթիլիասի մասնաճիւղի Անդամական ընդհանուր ժողովը տեղի պիտի ունենայ երկուշաբթի, 24 յունիս 2019-ին, երեկոյեան ժամը 8:30-ին, «Աղբալեան-ՀՄԸՄ» մարզա-մշակութային համալիրին մէջ:

**ԾԱՆՕԹ.- Ներկաներուն թիւը մեծամասնութիւն պիտի նկատուի երեկոյեան ժամը 9:00-ին:**

**ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

**ՀՄԸՄ ՊՈՒՐՑ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՍՆԱԾԻՂ**

**ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

ՀՄԸՄ Պուրճ Համուտի մասնաճիւղի Անդամական ընդհանուր ժողովը տեղի պիտի ունենայ երեքշաբթի, 25 յունիս 2019-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, «Ազիդեան» ակումբի սրահին մէջ:

**ԾԱՆՕԹ.- Ներկաներուն թիւը մեծամասնութիւն պիտի նկատուի երեկոյեան ժամը 8:30-ին:**

**ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

